

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

Ե. ԳԻՐՔ

Դ. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ
(Ի պէտս Ուսուցչաց)
(Բարեփոխում)



Պատրաստեց՝
Նուպար Սրկ. Պերպերեան

ԱՆԹԻԼԻԱՍ—ԼԻԲԱՆԱՆ
1995

Սոյն գիրքը կը հրատարակուի մեկենասութեամբ
ԾԱՓԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ

The Tzapik Baghdasarian Charitable Trust
The First National Bank of Boston, Trustee

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Անհուն գոհունակութեամբ եւ անկեղծ գնահատանքի զգացումով կը վերահրատարակենք «Կիրակնօրեայ դպրոցի դասեր»-ու շարքին հինգերորդ այս գիրքը նախատեսուած՝ Կիրակնօրեայ դպրոցի չորրորդ դասարանի համար: «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»-ու այս շարքը պատրաստութիւնն է, Կիրակնօրեայ դպրոցի անդատանէն ներս երախտագէտ աշխատանքով բեռնաւոր բարձ. Նուպար սրկ. Պէրպէրեանին:

Վերամշակուած եւ բարեփոխուած այս դասագիրքը, իր բովանդակութեամբ, հայ աշակերտին պիտի փոխանցէ Քրիստոսի կեանքին, առաքելութեան եւ ուսուցումներուն կապուած հիմնական գիտելիքներն ու պատգամները, որոնցմով կարելի պիտի ըլլայ նաեւ աշակերտին մօտ հետաքրքրութիւն եւ սէր արթնցնել երկնաւոր Վարդապետին հանդէպ:

Մեր կարծիքով ամէնէն կարեւոր եւ էական պարտականութիւնը ուսուցչին՝ պիտի ըլլայ ապահովել աշակերտին կապուածութիւնը դասին, առանց որու դասը ինք կը մնայ աննպատակ: Կասկած չկայ որ աշակերտներուն տարիքի ուսումնասիրութիւնը մեծապէս պիտի նպաստէ դասին աւելի յաջող աւանդման:

Կրօնի դասին ուսուցչին պարտականութիւնն է նախ աշակերտին մօտ հետաքրքրութիւն արթնցնել նիւթին մասին եւ ապա ջանալ զայն փոխանցելու կերպերուն, մեթոտներուն եւ միջոցներուն մասին մտածել: Ամէն տարիք ունի իրեն իրա-

լատուկ ընկալման կերպ եւ ընթացք, այնպէս ինչպէս աւանդուող իւրաքանչիւր նիւթ ունի իրեն իւրալատուկ մեթոտ: Գիտակից ուսուցչին պարտականութիւնն է լատապէս ուսումնասիրել իր աշակերտը, աշակերտները, քանի որ իւրաքանչիւր տարին աշակերտի հոգեկան եւ մտաւոր աշխարհի վրայ նոր քան կ'աւելցնէ:

Աշակերտին ճանաչման կողքին էական է նաեւ լատապէս սերտողութիւնը, պատրաստութիւնը աւանդելիք նիւթին: Աշակերտը շատ շուտով կը զգայ թէ ուսուցիչը իսկապէս հաւատքով եւ եռանդով կ'աւանդէ իր նիւթը թէ լոկ որպէս պարտականութիւն:

Յաջող եւ արդիւնաշատ գործունէութիւնն ու դաստիարակչական աշխատանքը կ'ենթադրեն առաւելագոյն նիւթ, պատուանդանուած քրիստոնէական հաւատքի վրայ:

Մեր ջերմ փափաքն է որ մեր ուսուցիչները առաջնորդուին Քրիստոսով եւ Քրիստոսի անձին ճառագայթող կեանքով, որպէսզի կարենանք մանուկները ուղիղ ընթացքով առաջնորդել Քրիստոսին եւ Իր Եկեղեցոյ:

ՍԵՊՈՒՀ Ծ. ՎՐԴ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

Վարիչ Տնօրէն

Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու
Քարտուղար ՀԵԿԴՕՄ-ի

12 Յունիս, 1995

Անթիլիաս-Լիբանան

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն դասագիրքը հինգերորդն է «Կիրակնօրեայ Դպրոցի Դասեր»-ու շարքին որ ի լոյս կ'ընծայուի երկրորդ տպագրութեամբ՝ կարգ մը բարեփոխումներով:

Այս գիրքին դասերը կը բովանդակեն Յիսուսի կեանքին գլխաւոր դրուագներն ու առակները: Դասերուն սկիզբը դրուած են աւետարաններէն հատուածներ որոնք պէտք է կարդացուին ուսուցիչին կողմէ դասի պատրաստութեան տեսն:

Իւրաքանչիւր պատմութիւն ունի իր եզրակացութիւնը ուր տրուած է դասին բարոյականը: Դրուած են նաեւ հարցումներ եւ նաեւ սուրբ գրային համար մը գոր պէտք է գոց սորվին աշակերտները:

Ուսուցիչը նախ աշակերտներուն պատմելու է դասին պատմութիւնը եւ աոիթ տալու է անոնց որ պատմեն իրենց մտիկ ըրածը: Դասը հետաքրքրական եւ տպաւորիչ դարձնելու համար կարելի է ցուցադրել պատմութիւնը նկարագրող մեծադիր նկարներ:

Աշակերտներուն պատմել տալէ ետք ուսուցիչը կը սկսի հարցումները ուղղել եւ ապա կ'անցնի պատմութեան եզրակացութեան: Դասին բարոյականը տալու տեսն կարելի է աշակերտները մասնակից դարձնել եւ օգնել անոնց որ իրենք ալ ջանան բարոյական դասեր քաղել օրուան պատմութենէն:

Յաջող դասաւանդութիւն ունենալու համար ուսուցիչը լաւ իրացուցած է պատրաստած ըլլալու է իր դասը:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներուն նպատակն է՝ հայ մանուկներուն տրվեցնել Աստուծոյ պատուիրաններն ու օրէնքները, որպէսզի անոնք դառնան նկարագրի տէր հայորդիներ: Հետեւաբար ուսուցիչը իր մակաւարժական մեթոտներուն միացնելու է հաւատք, աղօթք եւ օրինակելի կեանք: Քրիստոնէական կրօնքի դասաւանդութիւնը առանց աղօթքի եւ Աստուծոյ զօրութեան չի կրնար հասնիլ իր նպատակին:

ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ա. Դաս

Յովհաննէս Մկրտիչի Ծնունդը

(Ղուկ. Ա. 5-25, 57-80)

Հերովդէս Թագաւորին օրով Հրէաստանի մէջ կը բնակէր Չաքարիա անուկով քահանայ մը, որուն կինն էր Եղիսաբէթ: Երկուքն ալ բարեպաշտ ու արդար էին. սակայն զաւակ չունէին եւ անդադար կ'աղօթէին Աստուծոյ որ իրենց որդի մը շնորհէր:

Անցան տարիներ ու Չաքարիա եւ Եղիսաբէթ ծերացան. բայց Չաքարիա իր քահանայական պաշտօնը կը շարունակէր կատարել:

Օր մը Չաքարիա Երուսաղէմի տաճարին սրբարանին մէջ Աստուծոյ խունկ կը մատուցանէր աղօթելով. իսկ ժողովուրդն ալ դուրսը կ'աղօթէր ու կը սպասէր անոր վերադարձին՝ օրհնութիւն ստանալու համար: Այդ պահուն, յանկարծ Աստուծոյ հրեշտակը՝ Գաբրիէլ, իրեն երեւցաւ: Չաքարիա շփոթեցաւ ու շատ վախցաւ: Սակայն հրեշտակը ըսաւ իրեն.

— Մի՛ վախնար, Չաքարիա. քու աղօթքդ լսուեցաւ: Քու կինդ Եղիսաբէթ քեզի որդի մը պիտի ծնի եւ անոր անունը Յովհաննէս պիտի դնես: Անիկա մեծ պիտի ըլլայ Աստուծոյ առջեւ եւ գինի ու օղի պիտի չխմէ. Սուրբ Հոգիով պիտի լեցուի ու Իսրայէլի ժողովուրդէն շատերը իրենց Տէր Աստուծոյն պիտի դարձնէ:

Չաքարիա չկրցաւ անմիջապէս հաւատալ հրեշտակի խօսքերուն, որովհետեւ ինք եւ իր կինը ծերացեր էին. ուստի լսած խօսքին ստուգութեան համար նշան մը տեսնելու ակնկալութեամբ հարցուց հրեշտակին:

— Ինչպէ՞ս հաւատամ ըսածիդ:

Հրեշտակը պատասխանեց իրեն.

— Ես եմ Գաբրիէլը որ Աստուծոյ առջեւ կը կենամ. ես զրկուեցայ քեզի այս բարի լուրը տալու: Քանի որ դուն իմ ըսած խօսքերուս չհաւատացիր, ահա համր պիտի ըլլաս ու պիտի չկարենաս խօսիլ, մինչեւ այն օրը որ այս ըսածներս կատարուին:

Ժողովուրդը որ Զաքարիային կը սպասէր, կը զարմանար անոր ուշանալուն համար: Զաքարիա երբ Տաճարի սրբարանէն դուրս ելաւ, սկսաւ ձեռքի շարժումով ու նշանով խօսիլ, որովհետեւ համր եղած էր:

Յաջորդ տարին Աստուած Զաքարիային ու Եղիսաբէթին մանչ զաւակ մը պարգեւեց որ մեծ ուրախութիւն պատճառեց թէ իրենց եւ թէ իրենց ազգականներուն ու բարեկամներուն:

Ութ օր ետք, մանկան անուանակոչութեան ատեն իրենց ազգականներն ու բարեկամները կ'ուզէին զայն իր հօրը անունով Զաքարիա կոչել. սակայն Եղիսաբէթ կը հակառակէր եւ կ'ըսէր թէ Յովհաննէս պիտի կոչուի: Ի վերջոյ ներկաները նշանով հարցուցին Զաքարիային թէ ինչ անունով կ'ուզէր կոչել իր զաւակը: Ան ալ գրատախտակ մը ուզեց եւ անոր վրան գրեց Յովհաննէս: Նոյն վայրկեանին Զաքարիային բերանը բացուեցաւ եւ սկսաւ խօսիլ ու զԱստուած օրհնել: Ապա մարգարէանալով ըսաւ Յովհաննէսին համար.

— Եւ դուն, զաւակս, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, եւ Տիրոջ առջեւէն պիտի քալես անոր ճամբան պատրաստելու:

Ներկայ եղողները այս բաները տեսնելով զարմացան եւ հասկցան թէ Աստուծոյ ձեռքը այս մանուկին վրան էր: Ամէն կողմէ մարդիկ այս հրաշքը իմանալով իրարու կը հարցնէին, «Ի՞նչ պիտի ըլլայ արդեօք այս մանուկը»:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Զաքարիա քահանան եւ իր կինը Եղիսաբէթ սուրբ ընտանիք մը կազմած էին եւ կը պահէին Աստուծոյ պատուիրաններն ու օրէնքները: Աստուած վարձատրեց գիրեմի մանչ զաւակ մը պարգեւելով: Յովհաննէս կը նշանակէ՝ Աստուծոյ շնորհքը, պարգեւը, նուէրը:

Զաքարիա եւ Եղիսաբէթ իրենց զաւակը դաստիարակեցին աստուածապաշտութեամբ: Յովհաննէս Աստուծոյ նամբուն հետեւելով արժանի եղաւ սուրբ մարգարէ մը ըլլալու: Մարգարէ կոչուած են այն սուրբ մարդիկը որոնք Աստուծոյ կողմէ ընտրուած են իր պատգամները, յայտնութիւններն ու խօսքերը ժողովուրդին փոխանցելու համար:

Զաքարիայի, Եղիսաբէթի եւ Յովհաննէսի ապրած սուրբ կեանքը օրինակ պէտք է ըլլայ մեր բոլորին:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Զաքարիա եւ Եղիսաբէթ ինչպիսի՞ կեանք մը կ'ապրէին:
- 2) Զաքարիա ի՞նչ պաշտօնով մտած էր տանարին սրբարանը:
- 3) Խունկ մատուցանելու ատեն ո՞վ երեցաւ Զաքարիային:
- 4) Ի՞նչ էր անունը երեցոյ հրեշտակին:
- 5) Զաքարիա հրեշտակը տեսնելով ի՞նչ եղաւ:
- 6) Հրեշտակը ի՞նչ ըսաւ Զաքարիային:
- 7) Ինչո՞ւ համար Զաքարիա համր դարձաւ:
- 8) Ազգականներն ու բարեկամները մանուկը որո՞ւ անունով կոչել կ'ուզէին:

- 9) Եղիսաբէթ ի՛նչ կ'ըսէր անոնց:
 10) Զաքարիայի լեզուն ե՞րբ բացուեցաւ:
 11) Յովհաննէս մեծնալով ինչպիսի՞ մէկը դարձաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Եւ դուն, զաւա՛կս, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, եւ Տիրոջ սոցելէն պիտի քալես՝ անոր ճամբան պատրաստելու» (Ղուկ. Ա.76):

Բ. Դաս

Յովհաննէս Մկրտիչ եւ Յիսուսի Մկրտութիւնը (Մատթ. Գ. 1-17)

Զաքարիա քահանայի որդին՝ Յովհաննէս մեծնալէ ետք դարձաւ մեծ մարգարէ մը եւ սկսաւ Հրէաստանի անապատին մէջ քարոզել եւ ըսել, «Ապաշխարեցէք, որովհետեւ երկինքի Թագաւորութիւնը մօտեցած է»:

Յովհաննէս հագած էր ուղտի մազէ հագուստ եւ մէջքին կապած էր կաշիէ գօտի մը: Իր կերակուրն էր մարխա եւ վայրի մեղր: Յաճախ ծոմապահուած էր կ'անցընէր իր օրերը եւ շարունակ կ'աղօթէր, կը քարոզէր ու կը մկրտէր: Կը յանդիմանէր չարերը ու կը յորգորէր բոլորը որ Աստուծոյ դառնան եւ բարեգործութեան ու ողորմածութեան ետեւէ ըլլան: Ան իր քարոզներով մարդոց սիրտերը Աստուծոյ կը դարձնէր, ու կ'աւետէր թէ մարգարէական գիրքերու մէջ Աստուծոյ խոստացած Մեսիան՝ փրկիչ Քրիստոսը պիտի գար գիրենք փրկելու իրենց մեղքերէն:

Հրէաստանի ու Յորդանանի բոլոր կողմերէն ամէն դասակարգէ մարդիկ Յովհաննէս Մկրտիչին քով կու գային, կը մկրտուէին եւ իրենց մեղքերը կը խոստովանէին:

Օր մըն ալ Սաղուկեցիներէն եւ փարիսեցիներէն՝* մար-

* Սաղուկեցիներ եւ փարիսեցիներ անդամներ էին հրեական երկու կրօնական խմբակցութեանց կամ կուսակցութիւններու: Այս խմբակցութեանց հետեւորդները առհասարակ փառամոլ, ցիւթապաշտ ու կեղծաւոր մարդիկ էին: Անոնք միշտ պայքարեցան Յովհաննէս Մկրտիչի եւ Յիսուսի դէմ, որովհետեւ անոնց քարոզները պատճառ դարձան իրենց մեղքերուն քղազերծումին:

զիկ իրենն եկան մկրտուելու համար. սակայն անոնք մաքուր խղճով ու զղջումով չէին մօտեցած մկրտութեան: Յովհաննէս Մկրտիչ անոնց սրտին չար խորհուրդները հասկնալով յանդիմանեց զանոնք եւ ըսաւ.

— Իժերու ձագեր, ո՞վ իմացուց ձեզի որ գալիք բարկութենէն փախչիք: Ուրեմն ապաշխարութեան արժանաւոր պտուղ տուէք:

Յովհաննէս Մկրտիչ իր այդ խօսքերով ըսել կ'ուզէր, որ ապաշխարութիւնը սրտանց պէտք էր ըլլար եւ ապաշխարութեան յաջորդելու էր առաքինի կեանք մը: Իր խօսքերը շարունակելով Յովհաննէս Մկրտիչ կ'ըսէր.

— Ամէն ծառ որ բարի պտուղ չի բերեր, կը կտրուի ու կրակը կը ձգուի, այսինքն՝ անոնք որոնք չարութիւն կը գործեն յաւիտենական տանջանքի պիտի մատնուին դժոխքի կրակին մէջ:

Ժողովուրդէն շատեր Յովհաննէսին խօսքերը լսելով, սկսան իրարու հարց տալ եւ ըսել, «Արդեօք ա՞ն է Քրիստոսը որ աշխարհ պիտի գար»:

Յովհաննէս պատասխան տուաւ ամենուն եւ ըսաւ.

— Ես Քրիստոսը չեմ, ես անոր առջեւէն եկողն եմ... Ես ձեզ ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց ան որ ինձմէ յետոյ կու գայ, ինձմէ աւելի հզօր է, եւ ես արժանի չեմ անոր կօշիկները կրելու: Ան ձեզ պիտի մկրտէ Հոգւով Սրբով եւ կրակով:

Այդ օրերուն Յիսուս Գալիլիայէ Յորդանան եկաւ Յովհաննէսին քով, որպէսզի անկէ մկրտուի: Յովհաննէս երբ Յիսուսը տեսաւ, Սուրբ Հոգիին ազդեցութեամբ հասկցաւ թէ իրմէ մկրտուիլ ուզողը Աստուծոյ միածին Որդին՝ Քրիստոսն է. ուստի անմիջապէս ետ կեցաւ եւ ըսաւ.

— Ինձի պէտք է որ քեզմէ մկրտուիմ:

Յիսուս պատասխանեց իրեն.

— Հիմա թո՛ղ տուր որ այսպէս ըլլայ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը:

(Յիսուս իր այս պատասխանով ըսել կ'ուզէր որ ինք թէեւ Աստուածորդի էր եւ անմեղ, սակայն հին կտակարանի ծիսական օրէնքին տակ մտած էր եւ զանոնք կէտ առ կէտ պիտի գործադրէր իր առաքելութեան ընթացքին՝ իր վրկագործութեան խորհուրդը կատարելէ առաջ):

Յովհաննէս տեղի տուաւ ու մկրտեց զԱյն: Երբ Յիսուս ջուրէն դուրս ելլելով աղօթքի կեցաւ, նոյն ժամուն երկինքը բացուեցաւ ու Աստուծոյ Հոգին ազաւնիի կերպարանքով իջաւ Անոր վրայ, եւ երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր, «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»:

Յիսուս երեսուն տարեկան էր մկրտուած ատեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ապաշխարել կը նշանակէ՝ գործուած մեղքերուն եւ սխալներուն համար գղջալ, լալ, խոստովանիլ եւ թողութիւն խնդրել:

Մկրտուիլ կը նշանակէ՝ լուացուիլ, մաքրուիլ:

Յովհաննէս Մկրտիչ իրեն եկողները կը մկրտէր ապաշխարութեան համար, որպէսզի անոնք իրենց մեղքերուն համար ներում խնդրելով, պատրաստուած ըլլային Քրիստոսը դիմաւորելու եւ Անոր միջոցաւ փրկուելու:

Աստուծոյ միածին Որդին Յիսուս Քրիստոս Յորդանան գետին մէջ Յովհաննէս Մկրտիչին ձեռքով մրկրտուելով, սրբեց ջուրը եւ հաստատեց նոր մկրտութիւն մը, սրբացում մը որ մարդ արարածը կը սրբէր նաեւ Ադամական կամ սկզբնական մեղքէն, գոր մարդկային ցեղը ժառանգած էր իր նախահայր Ադամէն: Մեր նախահօր եւ նախամօր գործած անհնազանդութեան, այսինքն առաջին մեղքին անէծքը փոխանցուեցաւ իրենց

սերունդին ու այդ պատճառով մարդկային ցեղը դատապարտուած էր կորստեան: Սակայն Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ իր Միածին Որդին զրկեց մարդոց փրկութեան համար: Ան եկաւ ու խաչին վրայ գոհունեցաւ, իր արիւնը թափելով քաւութիւն ըրաւ աշխարհի մեղքին համար: Ուստի ամէն ով որ Անոր հաւատայ ու մկրտուի, կը փրկուի:

Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու համար պայման է մկրտուիլը:

Մկրտութիւնը կը կոչուի նաեւ *վերստին ծնունդ*: Մըկրտուողը կը դառնայ Աստուծոյ որդեգիր ու եկեղեցւոյ անդամ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յովհաննէս Մկրտիչ քարոզելու ատեն ի՞նչ կ'ըսէր:
- 2) Մարդիկ Յովհաննէսին քով երթալով ի՞նչ կ'ընէին:
- 3) Յովհաննէս ի՞նչ ըսաւ Սաղոմեցիներուն եւ փարիսէցիներուն:
- 4) Յովհաննէս ի՞նչ ըսաւ իրմէ ետք գալիք Քրիստոսի մասին:
- 5) Յիսուս Յովհաննէսին քով երթալով ի՞նչ առաջարկեց:
- 6) Յովհաննէս ի՞նչ պատասխանեց Յիսուսի:
- 7) Յիսուս երբ ջուրէն դուրս ելաւ, ի՞նչ պատահեցաւ:
- 8) Հայր Աստուած երկինքէն ի՞նչ ըսաւ:
- 9) Յիսուս քանի՞ տարեկան էր մկրտուած ատեն:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ատիկա է իմ սիրելի Որդիս որուն ես հաճեցայ» (Մատթ. Գ. 17):

Գ. Դաս

Յիսուս կը փորձուի Սատանայէն

(Մատթ. Դ. 1-11)

Յիսուս Մկրտուելէ ետք անապատ տարուեցաւ Սուրբ Հոգիէն եւ հոն քառասուն օր իր ժամանակը անցուց ծոմապահութեամբ, աղօթքով ու խոկումով:

Սատանան մօտեցաւ Յիսուսին զԱյն փորձութեան մատնելու համար. ու տեսնելով որ Ան անօթի է, ըսաւ. — Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ որ այս քարերը հաց դառնան:

Յիսուս պատասխանեց.

— Գրուած է, թէ մարդ միայն հացով չ'ապրիր, այլ բոլոր այն խօսքերով որ Աստուած խօսած է:

Սատանան Յիսուսէն այս պատասխանը առնելով, իր առաջին փորձին մէջ ձախողեցաւ. սակայն առանց յուսահատելու ուղեց ուրիշ փորձութեան մը մէջ ձգել. ուստի զայն տարաւ Երուսաղէմ՝ սուրբ քաղաքը ու հանեց տաճարի բարձր աշտարակին վրայ եւ ըսաւ.

— Եթէ Աստուծոյ Որդին ես, դուն քեզ հոսկէ վար նետէ, քանի գրուած է, Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, եւ քեզ իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցնեն, որպէսզի ոտքդ քարի չզարնուի:

Յիսուս ըսաւ սատանային.

— Գրուած է դարձեալ, թէ քու Տէր Աստուածդ չ'փորձես: Սատանան նորէն առաւ Յիսուսը ու բարձր լերան մը վրան հանեց եւ ցոյց տուաւ Անոր, աշխարհի բոլոր թագաւորութիւններն ու անոնց փառքը եւ ըսաւ.

— Այս բոլորը քեզի կու տամ, եթէ երկրպագելով՝ պաշտես զիս:

Յիսուս պատասխանեց.

— Ետիս գնա՛, Սատանա՛յ, որովհետեւ գրուած է, թէ քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անոր՝ ծառայես:

Այս պատասխանին վրայ սատանան հեռացաւ եւ հրեշտակները գալով սպասաւորութիւն ըրին Յիսուսի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սատանան ուզեց Յիսուսը փորձութեան մատնել ու մեղքի մէջ ձգել. սակայն Յիսուս պապանձեցուց զայն եւ հեռացուց իրմէ:

Յիսուսի տուած պատասխաններէն պէտք է դաս առնենք եւ Աստուծոյ խօսքերով գորանանք, որպէսզի մենք ալ յաղթենք սատանային եւ զգուշանանք անոր խաբէութեամբ լեցուած չար խրատներէն:

1) *Մարդ, միայն հացով չ'ապրիր, այլ՝ բոլոր այն խօսքերով որ Աստուած խօսած է:* Յիսուս Աստուածաշունչէն այս համարը մէջքերելով ըսել ուզեց, որ մարդ հացէն ու ապրուստէն առաջ Աստուծոյ զօրութեան եւ հոգածութեան վստահելու է, որ կ'ապրեցնէ իր բոլոր զաւակները: Հետեւաբար ապրուստ նարելու սիրոյն, Աստուծոյ հանդէպ մեր ունեցած պարտականութիւններուն մէջ թերանալու չենք եւ ոչ ալ մեղքի նամբով դրամ շահելու մղուելու ենք:

2) *Քու տէր Աստուածդ չ'փորձես:* Յիսուս իր այս պատասխանով պապանձեցուց սատանան, երբ ան իրեն առաջարկեց տանարի աշտարակէն վար նետուիլ ու առանց վնասուելու վար իջնել ու բազմութեան առջեւ ներկայանալ ու ցոյց տալ թէ ինք Աստուծոյ կողմէ դրկուած Քրիստոսն է: Յիսուս հասկցուց սատանային

թէ իրեն տրուած այդ առաջարկը ցուցամոլութիւն է եւ միեւնոյն ատեն զԱստուած փորձել կը նշանակէր:

Աստուած ցուցամոլութեամբ անխոհեմութիւն գործողներուն հակառակ է եւ չ'օգներ անոնց:

3) *Քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անոր ծառայես:* Յիսուս Աստուածաշնչական այս համարը սատանային առջեւ ներկայացնելով՝ զայն վանեց իր քովէն:

Աստուծոյ կամքն է, որ իր արարածները միայն զինք պաշտեն, որովհետեւ ինքն է երկինքի ու երկրի եւ բոլոր արարածներուն ստեղծիչը: Մեր պարտականութիւնն է միայն զինք պաշտել:

Աշխարհի հարստութիւններն ու փառքը շահելու համար, պէտք չէ սատանային կամքը կատարել ու անոր առջեւ խոնարհիլ: Երբ դրամ շահելու եւ դիրքի հասնելու սիրոյն զարտուղի միջոցներու դիմենք, սատանան պաշտած կ'ըլլանք:

Զգոյշ ըլլանք մեղք գործելէ, եւ Յիսուսի նման մենք ալ փորձութիւններու ատեն միշտ ըսենք, «*ետիս գնա՛, սատանայ՛*»:

Յիսուսի քառասորեայ ծոմապահութիւնը գեղեցիկ օրինակ մըն է բոլոր հաւատացեալներուն, նամանաւանդ եկեղեցւոյ ծառաներուն, կրօնի ուսուցիչներուն եւ Աստուծոյ խօսքը քարոզողներուն: Կրօնական առաքելութեան չսկսած անհրաժեշտ է աղօթքը, որպէսզի անով զօրանայ ենթական ու կարենայ դէմ դնել սատանայի յարուցած խոչընդոտներուն եւ որոգայթներուն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս իր մկրտութենէն վերջ ո՞ր գնաց:
- 2) Յիսուս քանի՞ օր ծոմ պահեց:
- 3) Ո՞վ էկաւ Յիսուսը փորձելու համար:

- 4) Սատանան առաջին անգամ ի՞նչ առաջարկեց Յիսուսի:
- 5) Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 6) Սատանան Յիսուսը Երուսաղեմի տաճարի աշտարակին վրայ հանելով ի՞նչ ըստ:
- 7) Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 8) Սատանան երկրի բոլոր թագաւորութիւնները Յիսուսի տալու համար ի՞նչ առաջարկեց:
- 9) Յիսուս ի՞նչ ըսելով իր քովէն վանեց սատանան:
- 10) Սատանայի մեկնելէն ետք, որո՞նք եկան Յիսուսի քով:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

«Ետիս գնա՛, սատանա՛յ, որովհետեւ օրէնքի գիրքին մէջ գրուած է, «քու Տէր Աստուածդ պէտք է պաշտես եւ միայն անո՛ր ծառայես» (Մատթ. Դ.10):

Դ. Դաս

Տասներկու Աշակերտներուն Ընտրութիւնը (Յովհ. Ա.29-51, Մատթ. Դ.18-22, Մարկ. Բ.13-14)

Յիսուս իր քառասնօրեայ ծոմապահութենէն վերջ դարձեալ գնաց Յորդանանու կողմերը ուր Յովհաննէս Մկրտիչ տակաւին կը քարոզէր ու կը մկրտէր:

Յովհաննէս երբ Յիսուսը տեսաւ, զԱյն ժողովուրդին ներկայացուց եւ ըսաւ.

— Ահաւասիկ Աստուծոյ գառնուկը որ աշխարհի մեղքը կը վերցնէ: Աս է Ան, որու մասին կ'ըսէի թէ ինձմէ յետոյ կու գայ մարդ մը, որ ինձմէ նախապատիւ է, որովհետեւ ինձմէ առաջ էր:

Յովհաննէս Յիսուսը ժողովուրդին ներկայացնելէ ետք Անոր համար նաեւ վկայեց ըսելով.

— Կը տեսնէի Հոգին, որ աղաւնակերպ կ'իջնէր երկինքէն եւ կը հանգչէր Անոր վրայ: Ես չէի ճանչնար զինք. սակայն Ան որ զիս զրկեց ջուրով մկրտելու՝ ըսաւ, «Որուն վրայ որ տեսնես թէ կ'իջնէ ու կը հանգչի Հոգին, անիկա է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ»: Ես տեսայ եւ վկայեցի թէ Ան է Աստուծոյ Որդին:

Յաջորդ օր Յովհաննէս դարձեալ հոն կեցած էր իր աշակերտներէն երկուքին հետ: Նայելով Յիսուսին որ այնտեղէն կ'անցնէր, ըսաւ անոնց.

— Ահաւասիկ Քրիստոս՝ Աստուծոյ գառնուկը: Այս խօսքին վրայ Յովհաննէսին երկու աշակերտները Յիսուսի ետեւէն գացին եւ հարցուցին անոր, թէ ուր էր իր օթեւանը:

Յիսուս զանոնք իր բնակարանը տարաւ: Այդ օրը Յիսուսի քով մնացին խօսեցան եւ մտիկ ըրին զԱյն եւ համոզուեցան թէ Ան էր սպասուած Քրիստոսը:

Այս երկու աշակերտներէն մին, որ Անդրէաս կը կոչուէր, իր եղբայրը՝ Սիմոնը գտնելով ըսաւ անոր, «Գրտանք Մեսիան (Քրիստոսը)», ու զայն տարաւ Յիսուսի քով: Յիսուս Սիմոնին նայելով ըսաւ.

— Ասկէ ետք դուն Կեփաս (Պետրոս, Վէմ, Ժայռ) պիտի կոչուիս:

Հետեւեալ օրը Յիսուս հանդիպեցաւ Փիլիպպոսի եւ ըսաւ անոր.

— Իմ ետեւէս եկո՛ւր:

Փիլիպպոս հետեւեցաւ Յիսուսի եւ իր կարգին գնաց գտաւ իրեն բարեկամ Նաթանայէլը, որ թզենիի մը տակ կեցած էր. ու ըսաւ անոր.

— Մովսէսի օրէնքին եւ մարգարէներու գիրքերուն մէջ գրուած ու խոստացուած Մեսիան գտանք: Դուն ալ եկուր եւ մեզի միացիր:

— Ո՞վ է ձեր գտած անձը, հարցուց Նաթանայէլ:

— Յիսուս՝ Յովսէփի որդի, Նազարէթ քաղաքէն, ըսաւ Փիլիպպոս:

— Միթէ Նազարէթ քաղաքէն կարելի՞ է, որ աղէկ բան մը ելլէ, ըսաւ Նաթանայէլ:

Փիլիպպոս պնդեց որ Նաթանայէլ հետեւի իրեն եւ տեսնէ Յիսուսը:

— Ահաւասիկ Իսրայէլացի մը որուն մէջ նենգութիւն չկայ, ըսաւ Յիսուս, տեսնելով Նաթանայէլը:

— Դուն ուրիշ՞ կը ճանչնաս զիս, հարցուց Նաթանայէլ:

— Դեռ Փիլիպպոս քեզ չկանչած՝ երբ թզենիին տակն էիր քեզ տեսայ, ըսաւ Յիսուս:

Յիսուսի այս խօսքին վրայ Նաթանայէլ հասկցաւ թէ իր խօսակիցը սովորական մէկը չէր. ուստի ըսաւ.

— Ռաբբի (Վարդապետ), դուն ես Աստուծոյ Որդին: Յիսուս ըսաւ իրեն.

— Առանց քու քովդ ըլլալու, քեզ թզենիին տակ տեսած ըլլալո՞ւս համար կը հաւատաս: Դեռ ասկէ աւելի մեծամեծ բաներ պիտի տեսնես: Պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակները՝ որոնք կ'ելլեն ու կ'իջնեն Մարդու Որդիին վրայ:

Յիսուս քաղաքէ քաղաք եւ գիւղէ գիւղ կը պտըտէր եւ երկինքի արքայութեան աւետարանը կը քարոզէր, թէ եւ իր ընտրած աշակերտները տակաւին վերջնականապէս իրենց գործերը ձգելով իրեն չէին կապուած: Անոնք դեռ կը զբաղէին իրենց արհեստովը: Սակայն հետագային ամէն բան ձգելով Յիսուսի հետեւեցան:

Օր մը Յիսուս Գալիլիոյ ծովուն եզերքը պտտելու ատեն տեսաւ Սիմոնն ու Անդրէասը որոնք ձկնորսութիւն կ'ընէին: Յիսուս զանոնք կանչեց ըսելով.

— Իմ ետեւէս եկէք, ու ձեզ մարդոց որսորդ պիտի ընեմ:

Երկու եղբայրները Յիսուսի հրաւերին վրայ իրենց ուռկանները ձգեցին ու Անոր ետեւէն գացին:

Յիսուս աւելի առաջ երթալով՝ տեսաւ Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրներն ալ, որոնք նաւուն մէջ նստած իրենց հօր՝ Զեբեդէոսի հետ ուռկաններ կը կարկտէին: Յիսուս զանոնք ալ կանչեց: Անոնք ալ նաւն ու իրենց հայրը թողուցին եւ Յիսուսին հետեւեցան:

Ուրիշ օր մը Յիսուս երբ Կափառնայումէն դուրս կ'ելլէր, մաքսատան մէջ տեսաւ Ղեւի կամ Մատթէոս անուանով պաշտօնեայ մը եւ զայն ալ կանչեց իրեն հետեւելու: Ղեւի ընդառաջ գնաց հրաւերին եւ դարձաւ Յիսուսի աշակերտ:

Յիսուս ուրիշներ եւս կանչեց եւ ունեցաւ տասներկու աշակերտներ, որոնց անուններն էին՝ Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս, Անդրէաս, Փիլիպպոս, Թովմաս,

Բարթողիմէոս (Նաթանայէլ), Մատթէոս, Յակոբոս Ալփեան, Թադէոս, Սիմոն Կանանացի եւ Յուդա Իսկարիովտացի:

Այս տասներկու աշակերտները կոչուեցան առաքեալ, որովհետեւ անոնք Յիսուսի կողմէ զրկուեցան աշխարհի ամէն կողմերը՝ Աւետարանը քարոզելու: Առաքեալ կը նշանակէ՝ զրկուած:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս մեզ բոլորս ալ կը կանչէ, որպէսզի իրեն աշակերտ եւ հետեւող ըլլանք: Մեր պարտականութիւնն է՝ հնազանդիլ իր ձայնին, պահել աստուածային իր պատուիրանները, ըլլալ պարկեշտ, սիրել զիրար, հնազանդիլ ծնողաց եւ մեծերուն ու չ'անարգել ոեւէ մէկը: Ան որ չարութիւն կը գործէ, չի կրնար Յիսուսի մամբուն հետեւող ըլլալ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յովհաննէս Մկրտիչ ի՞նչ վկայութիւն տուաւ ժողովորդին Յիսուսի համար:
- 2) Յովհաննէս Մկրտիչ իր երկու աշակերտներուն ի՞նչ ըսաւ Յիսուսի համար:
- 3) Անդրէաս զո՞վ բերաւ Յիսուսի քով:
- 4) Յիսուս Սիմոնին ի՞նչ ըսաւ:
- 5) Փիլիպպոս զո՞վ բերաւ Յիսուսի քով:
- 6) Յիսուս Նաթանայէլը տեսնելով ի՞նչ ըսաւ:
- 7) Յիսուս Գալիլիոյ ծովուն եզերքը առաջին անգամ որո՞նց հանդիպեցաւ եւ ի՞նչ ըսաւ անոնց:
- 8) Յիսուս երկրորդ անգամ ո՞ր եղբայրներուն հանդիպեցաւ:

- 9) Յիսուս ո՞ր հանդիպեցաւ Ղեւիին եւ ի՞նչ ըսաւ անոր:
- 10) Յիսուս քանի՞ աշակերտ ունեցաւ:
- 11) Յիսուսի տասներկու աշակերտները ի՞նչ կոչուեցան:
- 12) Տուր անոնց անունները:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Հետեւեցէ՛ք ինձի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ»
(Մատթ. 7.19):

Նիկողեմոս Յիսուսի մօտ

(Յովհ. Գ.1-21)

Նիկողեմոս անունով Փարիսեցի մարդ մը կար, որ ուսեալ իշխան մըն էր եւ լսած էր Յիսուսի մասին: Ան նաեւ ստուգած էր անոր խօսքերուն եւ հրաշքներուն աստուածային ըլլալը: Ուստի գիշերով՝ իր փարիսեցի ընկերներէն գաղտնի, Յիսուսին քով եկաւ եւ ըսաւ.

— Վարդապետ, գիտե՞նք որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ:

Յիսուս ըսաւ Նիկողեմոսի.

— Ծշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը վերջապէս չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը:

Նիկողեմոս չհասկցաւ Յիսուսի խօսքին իմաստը եւ զարմացած հարցուց.

— Հնարաւոր է որ մէկը նորէն պզտիկ դառնայ ու վերստին ծնի:

Յիսուս դարձեալ ըսաւ իրեն:

— Ծշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, եթէ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Հոգիէն ծնածը՝ Հոգի: Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք: Հովը ո՛ւր որ ուզէ՝ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ'երթայ. նոյնպէս են բոլոր անոնք որոնք Հոգիէն կը ծնին:

Նիկողեմոս դարձեալ չկրցաւ ըմբռնել Յիսուսի խօսքերը եւ հարցուց.

— Ինչպէ՞ս կրնայ ըլլալ ատիկա:

Յիսուս պատասխանեց.

— Դուն իսրայէլի մէջ վարդապետ մըն ես, եւ այս բաները չե՞ս գիտեր:

Յիսուս իր այս պատասխանով ըսել կ'ուզէր, թէ Նիկողեմոս Աստուծոյ խօսքը միշտ կարդացող եւ ուսուցանող ըլլալով, պէտք էր գիտնար թէ Հին Կտակարանի գիրքերուն մէջ գրուած էր, թէ ջուրը սրբութեան նշանակ էր: Ինչպէս Եզեկիէլ մարգարէն ալ դարեր առաջ գուշակած էր, թէ Աստուած սուրբ ջուր պիտի սրսկէր իր զաւակներուն վրայ ու զանոնք պիտի մաքրէր իրենց մեղքերէն: Անոնք վերստին պիտի ծնէին՝ նոր սիրտ եւ նոր հոգի ստանալով (Եզեկ. ԼԶ.25-28):

Յիսուս իր այս խօսքերով Նիկողեմոսին ուզեց հասկըցնել, թէ երկինքի արքայութիւնը մտնելու համար պայման էր վերստին ծնիլ, այսինքն՝ մկրտուիլ ամենասուրբ Երրորդութեան անունով:

Յիսուս խօսակցութիւնը շարունակելով ըսաւ Նիկողեմոսին.

— Ինչպէս որ Մովսէս պղինձէ օձը բարձրացուց անպատին մէջ*, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ (խաչին վրայ), որպէսզի ով որ հաւատայ անոր, չկորսուի, այլ յաւիտենական կեանքն ընդունի:

* Դարեր առաջ, Մովսէս մարգարէի օրով, իսրայէլացիներ անպատին մէջ Աստուծոյ դէմ մեղք գործեցին: Աստուած զանոնք պատժելու համար օձեր դրկեց եւ բազմաթիւ անձեր անոնցմէ խայթուելով մեռան: Իսրայէլացիներ այդ ահաւոր պատիժէն սարսափելով, զոջացին իրենց մեղքին վրայ եւ Մովսէս մարգարէէն խնդրեց, որ իրենց համար Աստուծոյ աղաչէր:

Աստուած Մովսէս մարգարէին աղաչանքը ընդունելով պատուիրեց անոր, որ պղինձէ օձ մը շինէր եւ բարձր տեղ մը հաստատէր զայն, որպէսզի խայթողները անոր նայելով թշկուէին: Մովսէս մարգարէն կատարեց Աստուծոյ հրամանը եւ խայթողները պղինձէ օձին նայելով՝ անողջացան: (Թոուց ԻԱ.4-9):

Յիսուս այլ բաներու կարգին Նիկողեմոսին յայտնեց, թէ ինք Հօր Աստուծոյ կողմէ զրկուած է աշխարհը լուսաւորելու եւ մեղաւոր մարդկութիւնը իրենց մեղքերէն փրկելու համար: Բայց չար մարդիկ չեն ուզեր լոյսին մօտենալ, որովհետեւ իրենց չար գործերը լոյսի ճառագայթներուն առջեւ երեւան պիտի ելլեն եւ իրենք պիտի յանդիմանուին:

Նիկողեմոս գոհ մնաց Յիսուսի խօսքերէն եւ անոր տուած բացատրութիւններէն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1) Յիսուսի աշխարհ գալուց պատճառը մեղաւոր մարդկութեան փրկութիւնն էր: Աստուած այնչափ սիրեց աշխարհը որ իր Միածին Որդին զրկեց, որպէսզի Ան խաչին վրայ իր սուրբ արիւնը թափէր մարդոց փրկութեան համար:

2) Յիսուս Նիկողեմոսին բացատրեց, թէ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար անհրաժեշտ է, որ մարդ արարածը վերստին ծնի ջուրէն ու Հոգիէն, այսինքն՝ մկրտուելով սրբուի սկզբնական կամ ադամական մեղքէն:

3) Յիսուս լոյս է. Ան աշխարհ եկաւ իր աստուածային պատգամներով աշխարհը լուսաւորելու, որպէսզի մարդիկ խաւարի գործերէն (չարութենէ) հեռու կեանք եւ Աստուծոյ դառնալով բարի կեանք ապրին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ էր Նիկողեմոս:
- 2) Նիկողեմոս ե՞րբ եկաւ Յիսուսի քով:

- 3) Նիկողեմոս ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 4) Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 5) Նիկողեմոս կրցա՞ր հասկնալ Յիսուսին խօսքերը:
- 6) Ջուրէն ու Հոգիէն ծնիլ ըսելով, Յիսուս ի՞նչ բանի կ'ակնարկէր:
- 7) Աստուած ինչո՞ր համար իր Միածին Որդին աշխարհ զրկեց:
- 8) Չար մարդիկ կ'ուզե՞ն լոյսին մօտենալ:
- 9) Աստուծոյ լոյսին (Քրիստոսի) հանդէպ մեր պարտականութիւնը ի՞նչ պէտք է ըլլայ:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

«Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն Անոր հաւատացողը՝ չկորսուի, այլ յաիտեանական կեանք ունենայ» (Յովհ. 4.16):

ՅԻՍՈՒՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Կափառնայումի Անդամալոյծին բժշկութիւնը

(Մարկ. Բ.1-12)

Օր մը Յիսուս Կափառնայում գացած էր եւ տունի մը մէջ Աստուծոյ խօսքը կ'ուսուցանէր: Զինք մտիկ կ'ընէին նաեւ փարիսեցիներ եւ դպիրներ: Բազմութիւնը այնքան խոնուած էր, որ դրան առջեւն անգամ տեղ չէր մնացած:

Նոյն միջոցին չորս մարդիկ անդամալոյծ մը վերցուցած բերին. սակայն չկրցան բազմութիւնը ճեղքելով Յիսուսի մօտ տանիլ. ուստի անմիջապէս տունին տանիքը ելան եւ առաստաղը բանալով անդամալոյծը իր անկողինովը վար իջեցուցին՝ ճիշդ Յիսուսին առջեւ:

Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին:

— Որդե՛ս'կ, քու մեղքերդ ներուած են:

Յիսուսի այս խօսքին վրայ հոն գտնուող փարիսեցիներն ու դպիրները այլայլեցան ու իրենց մտքին մէջ ըսին, «Ո՞վ է սա, որ նման սրբապիղծ խօսքեր կ'ընէ. Աստուած միայն կրնայ մեղքերու թողութիւն տալ»:

* Դպիրները հրեաներու մէջ ուսեալ անձեր էին, որոնց պաշտօնն էր ժողովորդին ուսուցանել եւ մեկնել Հիւսիսային Կաթալոնիոյ գիրքերը: Անոնք կը կոչուէին ճատ օրինաց վարդապետներ, օրինակներ: Անոնցմէ ոմանք անդամ էին հրեաներու մեծ ժողովին:

Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով ըսաւ.

— Ինչո՞ւ համար նման մտածումներ կ'անցընէք ձեր միտքէն: Ո՞ր մէկը աւելի դիւրին է. ըսել անդամալոյծին՝ ներուած են մեղքերդ, թէ ըսել՝ ելի՛ր ու քալէ: Սակայն պէտք է գիտնաք թէ Մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ՝ մեղքերու թողութիւն տալու:

Ապա ըսաւ անդամալոյծին.

— Քեզի կ'ըսե՛մ, ոտքի ելի՛ր, մահիճդ առ եւ տունդ գնա:

Յիսուսի այս խօսքին վրայ, անդամալոյծը իսկոյն առողջացաւ, ոտքի ելաւ ու իր անկողինը առնելով տուն գնաց եւ փառք տուաւ Աստուծոյ:

Մարդիկ այս հրաշքը տեսնելով զարմացան ու գԱստուած փառաւորելով ըսին թէ նման հրաշք մը երբեք չէին տեսած:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս, նախ անդամալոյծին մեղքերը ներեց եւ ապա գայն ոտքի հանեց, քանի որ ան իր մեղքերուն պատճառով այդ վիճակին մատնուած էր:

Աստուծոյ ամենակարողութիւնը միայն կրնայ անդամալոյծ մը բժշկել եւ մեղքերու թողութիւն տալ: Յիսուս անդամալոյծը ոտքի հանելով ցոյց տուաւ իր Որդի Աստուծոյ ըլլալն ու մարդոց մեղքերուն թողութիւն տալու իշխանութիւն ունենալը:

Հարիւրապետի ծառային բժշկութիւնը

(Ղուկ. Է.1-10)

Կափառնայումի մէջ կը բնակէր հեթանոս հարիւրապետ մը: Այս մարդը ունէր հաւատարիմ ծառայ մը՝ զոր շատ կը սիրէր: Օր մը այս ծառան ծանր աստիճան հիւանդացաւ եւ մահուան մօտեցաւ: Հարիւրապետը Յիսուսի կատարած բժշկութիւնները իմացած ըլլալով, ուզեց Անոր դիմել: Սակայն ինք հեթանոս ըլլալուն չհամարձակեցաւ անձամբ ներկայանալու, այլ հրեաներու ծերերէն (գլխաւորներէն) մի քանի հոգի զրկեց Յիսուսին:

Հրեայ ծերերը սիրով ընդառաջեցին ու Յիսուսէն խնդրեցին հիւանդ ծառան բժշկել: Միեւնոյն ատեն հարիւրապետին համար վկայեցին թէ ան հեթանոս ըլլալով հանդերձ, արժանի էր իրմէ շնորհք ընդունելու, որովհետեւ իրենց ազգը կը սիրէր եւ քաղաքին ժողովարանն ալ ինք շինել տուած էր:

Յիսուս անոնց աղաչանքին ընդառաջելով՝ ճամբայ ելաւ: Երբ տան մօտեցած էին, հարիւրապետը պատգամաւորներ զրկեց եւ ապա ինք անձամբ դիմաւորելով ըսաւ Յիսուսին.

— Տէ՛ր, մի՛ յոգնիր, որովհետեւ ես արժանի չեմ քեզի պէս սուրբ մէկը իմ տանս մէջ ընդունելու: Անոր համար ես ինքզինքս արժանի չնկատեցի քեզի գալու: Դուն խօսք մը միայն ըսէ եւ ծառաս պիտի բժշկուի:

Յիսուս զարմացաւ հեթանոս հարիւրապետին ունեցած զօրաւոր հաւատքին վրայ եւ իր շուրջը գտնուողներուն ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ նոյնիսկ Իսրայէլի մէջ այսպիսի հաւատք ունեցող մը չգտայ:

Ապա դառնալով հարիւրապետին ըսաւ.

— Գնա՛, ինչպէս հաւատացիր՝ այնպէս թող ըլլայ քեզի:

Հարիւրապետն ու իր մարդիկը երբ տուն դարձան, հիւանդ ծառան առողջացած գտան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հեթանոս հարիւրապետը զօրաւոր հաւատք ունեցաւ Յիսուսի ամենակարողութեան վրայ եւ այդ պատճառով իր ծառան բժշկուեցաւ:

Մեզ ալ հարիւրապետին նման հաւատքով մօտեցալու եմք Քրիստոսի՝ մեր խնդրանքները իրեն ներկայացնելու ատեն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞ր քաղաքին մէջ տեղի ունեցան այս երկու հրաշքները:
- 2) Անդամալոյծը քանի՞ հոգիով շալկած էին:
- 3) Անդամալոյծը ինչպէ՞ս իջեցուցին Յիսուսի առջեւ:
- 4) Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ի՞նչ ըսաւ անդամալոյծին:
- 5) Փարիսեցիներն ու դպիրները իրենց մտքին մէջ ի՞նչ ըսին:
- 6) Յիսուս անոնց սրտին խորհուրդը իմանալով ի՞նչ ըսաւ:
- 7) Անդամալոյծը բժշկուելէ վերջ ի՞նչ ըրաւ:
- 8) Մարդիկ այս հրաշքը տեսնելով ի՞նչ ըսին:

- 9) Որո՞ւ ծառան հիւանդացած էր:
- 10) Հարիւրապետը Յիսուսի մօտ որո՞նք դրկեց:
- 11) Հրեայ ծերերը ի՞նչ ըսին Յիսուսի:
- 12) Հարիւրապետը ի՞նչ խնդրեց Յիսուսէն եւ ի՞նչ ըսաւ:
- 13) Յիսուս հարիւրապետին զօրատր հաւատքը տեսնելով ի՞նչ ըսաւ իր շուրջը գտնուողներուն:
- 14) Յիսուս ի՞նչ ըսաւ հարիւրապետին:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

«Գնա, ինչպէս որ հաւատացիր՝ այնպէս թող ըլլայ քեզի»
(Մատթ. Ը.13):

Է. Դաս

Ի ԾՆԷ Կոյրին Բժշկութիւնը

(Յովհ. Թ.1-38)

Շաբաթ օր մը, երբ Յիսուս իր աշակերտներով Երուսաղէմի մէջէն կ'անցնէր, հանդիպեցաւ ի ծնէ կոյր մարդու մը:

— Վարդապետ, մեղքը որո՞ւնն է, որ այս մարդը կոյր ծնած է, ի՞րն է, թէ իր հօրն ու մօրը, հարցուցին աշակերտները Յիսուսին:

— Մեղքը ոչ իրն է, ոչ ալ ծնողքին, պատասխանեց Յիսուս, այլ անիկա այսպէս եղեր է, որպէսզի Աստուծոյ զօրութիւնը յայտնի ըլլայ իրմով:

Այս ըսելով, Յիսուս գետինը թքաւ, կաւ շինեց եւ կոյրին աչքերը անով ծեփեց ու ըսաւ անոր.

— Գնա՛, լուացուէ Սելովամի աւազանին մէջ:

Կոյրը հնազանդելով, գնաց Սելովամի աւազանը, ու երբ իր աչքերը լուաց, սկսաւ տեսնել եւ ուրախանալ: Մարդիկ այս հրաշքը տեսնելով զարմացան: Ոմանք կ'ըսէին թէ այս մարդը այդ կոյրն է որ կը մուրար: Մինչ ուրիշներ կ'ըսէին թէ այդ կոյրը չէ. իսկ ինք կ'ըսէր թէ նախկին մուրացող կոյրն էր: Այսպէս ամէն կողմէ հարցումներ կը տեղային ու ինք բոլորին կը պատմէր ըսելով.

— Յիսուս կոչուած մարդ մը կաւ շինեց ու անով աչքերը ծեփեց եւ ըսաւ, «Գնա Սելովամի աւազանը եւ լուացուէ»: Ես ալ գացի, լուացուեցայ եւ հիմա կը տեսնեմ:

— Ո՞ւր է ան, որ քու աչքերդ բացաւ, հարցուցին մարդիկ:

— Չեմ գիտեր, պատասխանեց մարդը:

Մարդիկ առին զանիկա ու տարին փարիսեցիներուն քով եւ պատմեցին պատահած դէպքը:

Փարիսեցիները, որ միշտ կը հակառակէին Յիսուսի եւ կը նախանձէին Անոր, սկսան հարցուփորձել բժշկուող մարդը, որ համարձակօրէն սկսաւ պատմել անոնց ինչ որ Յիսուս ըրած էր իրեն: Փարիսեցիներէն ոմանք կը մեղադրէին Յիսուսը թէ այդ հրաշքը Շաբաթ օրը կատարելով՝ Աստուծոյ օրէնքին դէմ գործած էր, ու կ'եզրակացնէին թէ անիկա Աստուծոյ չէր: Իսկ ուրիշներ ալ իրարու հարց տալով կ'ըսէին, թէ մեղաւոր մը ինչպէ՞ս պիտի կրնար կոյրի մը աչքերը բանալ: Ի վերջոյ բժշկուող մարդուն հարցուցին.

— Դուն ի՞նչ կ'ըսես այն մարդուն համար, որ քու աչքերդ բացաւ:

— Մարգարէ է, պատասխանեց ան:

Սակայն անոնք չէին հաւատար, թէ այս մարդը նախապէս կոյր մըն էր եւ իր աչքերը նոր բացուած էին: Ուստի անոր ծնողքը կանչելով հարցուցին.

— Ա՞ն է ձեր որդին, որուն համար կ'ըսէիք թէ կոյր ծնած է, եւ հիմա ինչպէ՞ս կը տեսնէ:

Ծնողքը, հրեաներու զայրոյթէն վախնալով ըսին.

— Գիտենք թէ այս մեր որդին է եւ կոյր ծնաւ. բայց թէ հիմա ինչպէս կը տեսնէ՝ մենք չենք գիտեր: Ինք չափահաս է, ինք թող խօսի իր մասին:

Փարիսեցիները նորէն կանչեցին մարդը, որ նախապէս կոյր էր, եւ ըսին.

— Մենք գիտենք, որ այն մարդը (Յիսուս) մեղաւոր է:

— Եթէ մեղաւոր է, ես չեմ գիտեր, ըսաւ ան, միայն սա գիտեմ, որ ես կոյր էի եւ հիմա կը տեսնեմ:

— Ի՞նչ ըսաւ քեզի, աչքերդ ինչպէ՞ս բացաւ, հարցուցին փարիսեցիները նորէն:

— Դեռ հիմա ըսի ձեզի եւ լսեցիք: Ինչո՞ւ կ'ուզէք

անգամ մըն ալ լսել: Միթէ դո՞ւք ալ կ'ուզէք անոր աշակերտ ըլլալ:

— Դուն եղի՞ր անոր աշակերտ, ըսին փարիսեցիները՝ զայն նախատելով, մենք Մովսէսի աշակերտներ ենք: Մենք գիտենք, թէ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ. սակայն չենք գիտեր ասոր (Յիսուսի) ուրկէ ըլլալը:

Մարդը պատասխանեց.

— Ձարմանալին հոն է, որ դուք չէք գիտեր Անոր ուրկէ ըլլալը, եւ սակայն Ան իմ աչքերս բացաւ: Գիտենք, որ Աստուած մեղաւորներուն մտիկ չ'ըներ, բայց երբ մէկը աստուածապաշտ է եւ իր կամքը կը կատարէ՝ անոր մտիկ կ'ընէ: Աշխարհի սկիզբէն ի վեր լսուած բան չէ, որ մէկը ի ծնէ կոյրի մը աչքերը բացած ըլլայ: Եթէ այն մարդը Աստուծոյ չ'ըլլար՝ պիտի չկարենար բան մը ընել:

— Դուն բոլորովին մեղքերու մէջ ծնած ես ու մեզի վարդապետութի՞ւն կ'ընես, ըսին փարիսեցիները եւ դուրս ըրին զայն:

Յիսուս իմացաւ փարիսեցիներուն ըրածը եւ բժշկուող մարդուն հանդիպելով՝ հարցուց անոր.

— Դուն կը հաւատա՞ս Աստուծոյ Որդւոյն:

— Տէր, ո՞վ է ան, որպէսզի հաւատամ, հարցուց մարդը:

— Ան է, որ քեզի հետ կը խօսի, պատասխանեց Յիսուս:

— Կը հաւատամ, Տէր, ըսաւ մարդը ու երկրպագեց Յիսուսին, երբ իմացաւ թէ իր խօսակիցը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն էր, որ բացած էր իր աչքերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բժշկուող կոյրը երախտապարտ մնաց Յիսուսին: Անոր ըրած բարիքը չմոռցաւ եւ քաջաբար վկայեց փարիսեցիներուն առջեւ: Անիկա փառք տուաւ Աստուծոյ եւ երկրպագեց Յիսուսին՝ իր շնորհակալութիւնը յայտնելով:

Մենք այ, Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելու եմք, իր շնորհած բարիքներուն համար: Հարկ եղած պարագաներուն ալ քաջաբար դաւանելու եմք, թէ՛ Յիսուս Քրիստոս մեր Տէրն ու Փրկիչն է:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս եւ իր աշակերտները որո՞ւ հանդիպեցան:
- 2) Աշակերտները ի ծնէ կոյրը տեսնելով ի՞նչ հարցուցին Յիսուսի:
- 3) Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 4) Յիսուս ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ կոյրին:
- 5) Կոյրը երբ իր աչքերը լուաց, ի՞նչ պատահեցաւ:
- 6) Մարդիկ այս հրաշքը տեսնելէ ետք, որո՞նց քով տարին թժշկուող մարդը:
- 7) Փարիսեցիներ՝ այս հրաշքը տեսնելով, իրարու մէջ ի՞նչ կ'ըսէին:
- 8) Փարիսեցիները թժշկուող մարդուն ծնողքը կանչելով ի՞նչ ըսին:
- 9) Անոր ծնողքը ի՞նչ ըսին:
- 10) Երկրորդ անգամ փարիսեցիները ի՞նչ հարցուցին թժշկուող մարդուն:
- 11) Մարդը ի՞նչ պատասխանեց փարիսեցիներուն եւ անոնք ի՞նչ ըրին իրեն:
- 12) Յիսուս թժշկուող մարդուն հանդիպելով ի՞նչ ըսաւ անոր:
- 13) Մարդը ի՞նչ պատասխանեց Յիսուսի:
- 14) Յիսուս ի՞նչ պատասխանեց:
- 15) Յիսուսը ճանչնալէ-ետք, մարդը ի՞նչ ըսաւ եւ ի՞նչ ըրաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Տէրը կը բանայ կոյրերուն աչքերը եւ կը կանգնեցնէ գլորածները» (Սաղմ. ԺԽԵ. (ԺԽԶ.) 8):

Ը. Դաս

Սերմնացանին Առակը*

(Ղուկ. Ը.4-15)

Մեծ բազմութիւն մը հաւաքուած էր Գալիլիոյ ծովուն եզերքը՝ Յիսուսի խօսքերը լսելու եւ հրաշքները տեսնելու համար: Յիսուս ծովեզերքին մօտ գտնուող նաւակներէն մէկուն վրայ ելաւ եւ սկսաւ քարոզել: Շատ բաներ խօսեցաւ եւ ի միջի այլոց ըսաւ հետեւեալ առակը.— Սերմնացան մը ելաւ ու սերմ ցանեց: Սերմերէն մաս մը հատիկներ ինկան ճամբու վրայ եւ թռչունները եկան ու կերան զանոնք: Ուրիշներ ինկան ապառաժուտ տեղ, ու երբ բուսան, առաջին արեւը տեսնելուն՝ չորցան, որովհետեւ, պէտք եղած հողն ու հիւթը չունէին: Կարգ մը հատիկներ ալ ինկան փուշերու մէջ, սակայն փուշերը աւելի զօրաւոր ըլլալով, խեղդեցին աճելու վրայ եղող սերմերը: Իսկ շատեր ինկան լաւ հողի վրայ, որոնք ծլեցան, աճեցան ու պտուղ տուին՝ մէկի տեղ երեսուն, վախտուն եւ հարիւր:

* Առակ կը նշանակէ՝ այլաբանական (ուրիշ ձեով մէջբերուած) խօսք կամ պատմածք: Առակը յաճախ կը գործածուի խօսակցութեանց միջոցին, ու նաեւ քարոզելու ատեն՝ մարդոց մտքին մէջ խրատ մը կամ գաղափար մը դրոշմելու եւ հաստատելու համար:

Առակները պատկերաւոր արտայայտութիւններ են, որոնց մէջ տրուած կ'ըլլան մարդկային կենցաղէն առնուած իրողութիւններ, անասուններու բնագոյններէն, բոյսերու աճումէն եւ տարրերէն շարժումներէն ու բնութեան տեսարաններէն զանազան օրինակներ:

Յիսուս քարոզելու ատեն յաճախ առակներ խօսած է ժողովուրդին:

Յիսուսի աշակերտները չհասկցան այս առակին իմաստը, ու երբ Իրեն հետ առանձին մնացին՝ անոր մեկնութիւնը խնդրեցին Իրմէ: Յիսուս մեկնեց իր խօսած առակը՝ հետեւեալ բացատրութեամբ.— Սերմը Աստուծոյ խօսքն է. իսկ սերմանողը այն է, որ Աստուծոյ խօսքը կը քարոզէ: Անոնք որոնք թագաւորութեան խօսքը (Աւետարանի քարոզութիւնը) կը լսեն ու միտք չեն առնել, չարը՝ սատանան շուտով կու գայ եւ կը յափշտակէ անոնց սրտին մէջ ցանուածը: Ասոնք են ճամբուն վրայ ինկածները: Ապառաժուտ տեղի վրայ ինկածներն անոնք են, որ երբ կը լսեն խօսքը, իսկոյն ուրախութեամբ կ'ընդունին զայն, բայց իրենց մէջ արմատ չունենալով, ատեն մը կը հաւատան, սակայն երբ նեղութիւն կամ հալածանք ըլլայ, շուտով կը գայթակղին: Փուշերուն մէջ ինկածները անոնք են, որ Աստուծոյ խօսքը թէեւ կ'ընդունին, բայց աշխարհի հոգերը, հարստութեան պատրանքները եւ ուրիշ ցանկութիւններ կը մտնեն իրենց մէջ ու կը խեղդեն խօսքը եւ անպտուղ կը մնան: Իսկ պարարտ հողին մէջ ցանուածները անոնք են՝ որ Աստուծոյ խօսքը գուարթագին սրտով կ'ընդունին եւ համբերութեամբ յարատեւելով պտուղ կու տան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Աստուծոյ խօսքը ամէն ատեն կը ցանուի Տիրոջ ծառաներուն կողմէ: Մեր պարտականութիւնն է զայն ընդունիլ եւ պահել մեր սրտերուն մէջ:

Կեանքի ընթացքին, բազմաթիւ դժուարութիւններ կըրնան հանդիպիլ մեզի: Սատանան, ամէն ատեն պատրաստ է մեր սրտերէն հանելու Աստուծոյ խօսքը: Ան մեր առջեւ կը բերէ այլեւայլ դժուարութիւններ ու նեղութիւններ, որպէսզի մեզ մեղքի մէջ ձգէ: Եթէ ստոնց մէջ

չյաջողի, աշխարհային հրապոյրներ (հարստութիւն, փառասիրութիւն, հաճոյամոլութիւն) կը դնէ մեր դիմաց, որպէսզի անոնց յարելով, Աստուծոյ օրէնքները թողումք: Այդ ամէն փորձութիւններուն առջեւ ընկրկելու չենք, այլ անոնց յաղթելու համար Աստուծոյ օգնութիւնը հայցելու ենք: Տէրը օգնութեան կը հասնի եւ յաղթութիւն կը շնորհէ բոլոր անոնց, որոնք սրտանց զինք կը պաշտեն եւ իրեն կ'աղօթեն:

Ձանաճ մտանիլ պարարտ հողին, որուն վրայ ինկած սերմերը աճելով բազմաթիւ արդիւնքներ տուին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Սերմնացանը ի՞նչ ըրաւ:
- 2) Ի՞նչ պատահեցաւ ճամբուն վրայ ինկած սերմերուն:
- 3) Ի՞նչ եղան ապառաժուտ տեղը ինկող սերմերը:
- 4) Փուշերու մէջ ինկող սերմերը ինչո՞ւ համար չկրցան պտուղ տալ:
- 5) Լաւ հողի մէջ ինկող սերմերը ի՞նչ եղան:
- 6) Յիսուսի աշակերտները կրցա՞ն հասկնալ այս առակին իմաստը:
- 7) Երբ առանձին մնացին, աշակերտները ի՞նչ ըսին Յիսուսի:
- 8) Յիսուսի բացատրութեամբ, սերմը ի՞նչ բանի նշանակ է:
- 9) Յիսուս ինչպէ՞ս մեկնեց ճամբուն վրայ ինկած սերմերու պարագան:
- 10) Յիսուս ի՞նչ բացատրութիւն տուաւ ապառաժուտ տեղի վրայ ինկած սերմերուն մասին:
- 11) Յիսուս ի՞նչ բացատրութիւն տուաւ փուշերու մէջ ինկած սերմերուն համար:

12) Յիսուս ինչպէ՞ս մեկնեց լաւ հողի մէջ աճող սերմերու պարագան:

13) Դուք ո՞ր տեսակ հողին նմանիլ կ'ուզէք:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Հեղութեամբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել» (Յակ. Ա.21):

Թ. Դաս

Որոմներուն Առակը

(Մատթ. ԺԳ.24-30, 36-43)

Գալիլիոյ ծովուն եզերքը սերմնացանին առակը պատմելէն ետք, Յիսուս ըսաւ նաեւ հետեւեալ առակը.— Մարդ մը իր արտին մէջ ցորեն ցանեց: Գիշերը թշնամի մարդ մը նոյն արտին մէջ որոմ* ցանեց: Ժամանակի ընթացքին ցորեններուն հետ միասին, որոմներն ալ ծիրեր արձակեցին ու սկսան աճիլ. սակայն ցորեններուն հասկերը երբ կազմուելու վրայ էին, որոմներն ալ սկսան իրենց պտուղը ցոյց տալ:

Տանտիրոջ ծառաները արտին մէջ աճող որոմները տեսնելով զարմացան, ու իրենց տիրոջ մօտ երթալով հարցուցին.

— Տէր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր արտիդ մէջ, ուրեմն ուրկէ՞ բուսաւ այս որոմը:

Տանտէրը ըսաւ անոնց.

— Թշնամի մը ըրած է ատիկա:

— Կ'ուզե՞ս որ երթանք ու քաղենք որոմները, հարցուցին ծառաները:

— Ո՛չ, պատասխանեց տանտէրը, գուցէ որոմը քաղելու ատեն ցորենն ալ հետը հանէք. թողէք որ երկուքը միասին աճին մինչեւ հունձք, եւ հունձքի ատեն հըն-

* Որոմը արմտիք մըն է, որ աճելու ատեն՝ մինչեւ պտուղ տալը՝ դժուար է զանազանել ցորենէն: Որոմի հատիկները թունաւոր են, եւ երբ աճող ցորենին խառնուելով միասին աղուին, յառաջ եկած ախիրէն պատրաստուած հացը՝ գլխու պտոյտ եւ սիրտխառնուք կը պատճառէ ուտողներուն:

ձողներուն պիտի ըսեմ որ առաջ որոմները քաղեն եւ զանոնք խուրճ-խուրճ կապելով այրեն, իսկ ցորենները իմ ամբարս ժողվեն:

Աշակերտները այս առակին ալ իմաստը չհասկցան ու երբ սուն վերադարձան, ըսին Յիսուսի.

— Տէ՛ր, մեկնէ մեզի արտի որոմներուն առակը:

Յիսուս ըսաւ անոնց.

— Լաւ սերմ ցանողը մարդու Որդին (Յիսուս Քրիստոս) է. արտը աշխարհս է եւ լաւ սերմերը՝ արքայութեան որդիներն (արդարները) են. իսկ որոմն ալ՝ չարին որդիները (անօրէնութիւն գործողները): Թշնամին, որ որոմը ցանեց, սատանան է եւ հունձքը՝ աշխարհիս վերջն է, իսկ հնձողներն ալ հրեշտակներն են: Արդ, ինչպէս որ որոմը կը ժողվուի, կրակը կը ձգուի ու կ'այրի, աշխարհիս վերջն ալ այնպէս պիտի ըլլայ: Մարդու Որդին իր հրեշտակները պիտի ղրկէ, ու անոնք պիտի ժողվեն անոր թագաւորութենէն բոլոր գայթակղութիւնները եւ կրակի հնոցին մէջ պիտի ձգեն զանոնք: Հոն տեղի պիտի ունենայ լալ եւ ակռաներ կրճտել: Այն ատեն, արդարները արեգակի նման պիտի փայլին երկինքի արքայութեան մէջ: Ով որ ականջ ունի լսելու՝ թող լսէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս, օր մը վերստին պիտի գայ բազում հրեշտակներով ու վերջ պիտի տայ աշխարհին: Ան պիտի դատէ բոլոր մարդիկը: Անոնք որոնք բարի կեանք ապրած են, պիտի մտնեն երկինքի արքայութիւնը: Իսկ անոնք որ չարութիւն գործած են՝ պիտի ձգուին դժոխքի անշէջ կրակին մէջ՝ որով խուրճերու նման:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս ո՞ր ծովուն եզերքը խօսեցաւ որոմներուն առակը:
- 2) Մարդ մը, իր արտին մէջ ի՞նչ ցանեց:
- 3) Գիշերը թշնամին ի՞նչ ցանեց ևոչն արտին մէջ:
- 4) Ծառակները ցորենին հետ միասին անող որոմը տեսնելով ի՞նչ ըսին իրենց տիրոջ:
- 5) Տանտէրը ի՞նչ ըսաւ իր ծառակներուն:
- 6) Տանտէրը թոյլ տուա՞ւ որոմները քաղելու:
- 7) Աշակերտները կրցա՞ն հասկնալ այս առակին իմաստը:
- 8) Ո՞վ մեկնեց այս առակը աշակերտներուն:
- 9) Այս առակին մէջ արտը ի՞նչ բանը կը խորհրդանշէ:
- 10) Ո՞վ է լալ սերմ ցանողը:
- 11) Ո՞վ է որոմ ցանողը:
- 12) Չարերուն փախնանք ի՞նչ պիտի ըլլայ աշխարհին վերջը:
- 13) Արդարները ինչպէ՞ս պիտի փայլին Աստուծոյ արքայութեան մէջ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Այն անոնք արդարները արեւու պէս պիտի փայլին երկնքի արքայութեան մէջ» (Մատթ. ԺԳ.43):

Յովհաննէս Մկրտիչից Մահը

(Մարկ. 2.17-29)

Հերովդէս Անթիպաս թագաւորը, անկարգ ու անբարոյ կեանք մը կը վարէր: Իր եղբայրը՝ Փիլիպպոս, ունէր կին մը Հերովդէի անունով որ նոյնպէս չար ու անբարոյ էր: Հերովդէի ամուսինէն զատուելով եկած էր Հերովդէսի մօտ ու կը կենակցէր անոր հետ:

Յովհաննէս Մկրտիչ որպէս մարգարէ՝ յանդիմանեց զանոնք եւ ըսաւ թէ իրենց ապօրինի կենակցութեամբ կը մեղանշէին Աստուծոյ ու մարդոց առջեւ:

Հերովդէս չմարսեց Յովհաննէսին յանդիմանութիւնը եւ զայն բանտարկել տուաւ: Հերովդէի կ'ուզէր սպաննել տալ Յովհաննէսը եւ միշտ կը դռդէր Հերովդէսը, որ անոր կեանքին վերջ տար: Սակայն Հերովդէս կը զգուշանար Յովհաննէսը մեռցնելէ, քանի որ համոզուած էր, որ ան արդար եւ սուրբ անձ մըն էր, եւ յաճախ զայն իր առջեւ բերել կու տար եւ մտիկ կ'ընէր անոր խօսքերը: Միեւնոյն ատեն ալ կը վախնար ժողովուրդէն, որովհետեւ Յովհաննէս իբրեւ մարգարէ ճանչցուած էր բոլորէն: Սակայն, Հերովդէի միշտ ոխ կը պահէր Յովհաննէս Մկրտիչին հանդէպ եւ յարմար առիթի մը կը սպասէր զայն մէջտեղէն վերցնել տալու համար:

Հերովդէի ունէր աղջիկ մը, որ իրեն հետ բերած էր Հերովդէսին պալատը, իր ամուսինը՝ Փիլիպպոսը ձգելէն վերջ: Սա եւս հետեւող էր իր մօրը չար ընթացքին:

Օր մը Հերովդէսի ծննդեան տարեդարձն էր եւ այդ

առիթով ընթրիքի հրաւիրուած էին թագաւորին նախարարները, հազարապետներն ու Գալիլիոյ երեւելիները: Խնճոյքի պահուն, Հերովդէի աղջիկը հանդիսասրահ մտնելով սկսաւ պարել: Այդ տեսարանը շատ հաճելի եղաւ Հերովդէսին եւ իր հիւրերուն: Հերովդէս ուրախութենէն ըսաւ աղջկան.

— Ինչ որ ուզես ինձմէ, պիտի տամ քեզի:

Հերովդէս դարձեալ երդում ընելով ըսաւ.

— Ինչ որ խնդրես ինձմէ պիտի տամ քեզի, մինչեւ իսկ թագաւորութեանս կէսը:

Աղջիկը դուրս ելլելով մօրը քով գնաց ու անոր հարցուց թէ ինչ խնդրէր թագաւորէն: Մայրը Յովհաննէս Մկրտիչը մեռցնել տալու համար այդ առիթը յարմար նկատեց եւ անմիջապէս իր աղջկան թելադրեց ուզել Յովհաննէս Մկրտիչին գլուխը: Աղջիկը փութով ներկայացաւ թագաւորին ու ըսաւ.

— Կ'ուզեմ որ հիմա անմիջապէս փոխէի մը վրայ Յովհաննէս Մկրտիչին գլուխը ինձի տաս:

Հերովդէս անակնկալի եկաւ աղջկան այդ առաջարկին վրայ ու շատ տրտմեցաւ. բայց իր մեծամեծներուն առջեւ երդում ըրած ըլլալուն համար, չկրցաւ մերժել անոր խնդրանքը: Ուստի հրամայեց դահիճին որ երթար, կրտսերէր Յովհաննէսին գլուխը ու բերէր: Իսկոյն կատարուեցաւ հրամանը եւ աղջիկը ստացաւ Յովհաննէս Մկրտիչին գլուխը փոխէի մը վրայ դրուած, զոր տարաւ իր մօրը:

Յովհաննէս Մկրտիչի աշակերտները, այս դէպքը իմանալով, եկան ու իրենց վարդապետին մարմինը վերցրնելով գերեզմանի մէջ դրին ու գացին Յիսուսի պատմեցին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յովհաննէս Մկրտիչ եղաւ մեծ մարգարէ մը, որ քաղաք քաղաք բոլորից որ մեղքէ ու չարութեան հետ

մնան եւ պատրաստուին աշխարհի Փրկիչ՝ Քրիստոսը դիմաւորելու: Ան չիճայեց ոեւէ մէկուն եւ յանդիմանեց բոլորը՝ իրենց մեղքերուն համար: Համարձակեցաւ յանդիմանելու նոյնիսկ թագաւորը եւ այդ պատճառով ալ գլխատուեցաւ:

Աստուծոյ սպասաւորները համարձակ պէտք է ըլլան իրենց յանձնուած ժողովուրդին յանցանքներն ու մեղքերը մատնանշելու եւ հարկ եղած պարագային յանդիմանելու՝ չարութիւն գործողները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ինչո՞ւ համար Հերովդէս քանտարկել տուաւ Յովհաննէս Մկրտիչը:
- 2) Ո՞վ կ'ուզէր մեղցնել տալ Յովհաննէս Մկրտիչը:
- 3) Հերովդիս ինչպիսի՞ կին մըն էր:
- 4) Հերովդէս ինչո՞ւ համար կը զգուշանար Յովհաննէսը մեղցնելէ:
- 5) Հերովդէսի ծննդեան տարեդարձին ի՞նչ սարքուած էր:
- 6) Խնճոյքի պահուն ո՞վ պարեց:
- 7) Հերովդէս ի՞նչ ըսաւ աղջկան:
- 8) Աղջիկը իր մօրը քով երթալով ի՞նչ հարցուց:
- 9) Աղջիկը իր մօրմէն խրատուելով, ի՞նչ խնդրեց Հերովդէսէն:
- 10) Որո՞նք թաղեցին Յովհաննէս Մկրտիչին մարմինը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Երանի անոնց, որոնք կը հալածուին արդարութեան համար, որովհետեւ անոնցն է երկինքի արքայութիւնը» (Մատթ. Ե.10):

ԺԱ. Դաս

Յիսուսի Այլակերպութիւնը

(Մատթ. ԺԷ.1-10)

Օր մը, Յիսուս, իր աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը հետն առնելով լեռ ելաւ աղօթելու: Գիշերը՝ աղօթքի պահուն, մինչ աշակերտները քունով ծանրացած էին, յանկարծ Յիսուսի դէմքը այլակերպելով արեգակի նման փայլեցաւ եւ զգեստներն ալ ձիւնի պէս սպիտակացան:

Աշակերտները, այս հրաշալի երեւոյթին առջեւ սթափեցան իրենց թմրութենէն ու տեսան Յիսուսի փառքը: Նոյն ատեն, տեսան Մովսէս եւ Եղիա մարգարէները՝ Յիսուսի քով կեցած, որոնք կը խօսէին իրեն հետ գալիք օրերուն Երուսաղէմի մէջ պատահելիք դէպքերու մասին, այսինքն՝ Յիսուսի կրելիք չարչարանքներուն, խաչելութեան եւ յարուստեան մասին:

Աշակերտները, Յիսուսի լուսափայլ դէմքն ու երկու մարգարէներուն ներկայութիւնը տեսնելով հիացան, եւ նոյն ատեն շփոթեցան ու զարհուրեցան: Իսկ Պետրոս իր շփոթութեան մէջ ըսաւ Յիսուսի.

— Վարդապետ, աղէկ է որ հոս կենանք ու երեք տաղաւար շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ մէկն ալ Եղիայի:

Մինչ Պետրոս կը խօսէր, ու չէր գիտեր թէ ինչ կ'ըսէր, յանկարծ լուսաւոր ամպ մը եկաւ ու հովանի եղաւ իրենց, եւ ամպին մէջէն ձայն մը եկաւ ըսելով, «Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ. Անոր մօտիկ ըրէք»:

Աշակերտները, երբ այդ ձայնը լսեցին, երեսի վրայ գետին ինկան ու շատ վախցան: Յիսուս, մօտենալով դպաւ անոնց եւ ըսաւ.

— Ելէ՛ք, ու մի՛ վախնաք:

Աշակերտները, երբ աչքերնին վեր բարձրացուցին, Յիսուսէն զատ մէկը չտեսան: Յաջորդ օր երբ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս իր երեք աշակերտներուն ըսաւ.

— Զեր տեսածը մարդու մի՛ ըսէք, մինչեւ որ Մարդու Որդին մեռելներէն յարուցիւն առնէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Յիսուս այլակերպելով, ցոյց տուաւ աշակերտներուն իր աստուածային փառքը: Իսկ Մովսէս եւ Եղիա մարգարէները Հին Ուխտի որպէս ներկայացուցիչներ՝ իրենց ներկայութեամբը վկայեցին, թէ Յիսուս Հօր Աստուծոյ կողմէ դրկուած Քրիստոսն էր, որ պիտի չարչարուէր, խաչուէր եւ իր սուրբ արիւնը թափէր համայն աշխարհի փրկութեան համար:

Հայր Աստուած, յուսաւոր ամպին մէջէն վկայեց, թէ Յիսուս իր Միածին Որդին էր, եւ նոյն ատեն հրամայեց որ Անոր մտիկ ընեն:

Հօր Աստուծոյ այդ ձայնը կ'ուղղուի նաեւ մեզի, որպէսզի հաւատանք իր Միածին Որդւոյն եւ կատարենք անոր պատուիրանները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Յիսուս որո՞նց հետ լեռ ելաւ. ինչո՞ւ համար:
- 2) Աղօթելու ատեն Յիսուս ի՞նչ եղաւ:
- 3) Ո՞ր մարգարէները Յիսուսի հետ երեւցան եւ ի՞նչ կը խօսէին:

4) Աշակերտները Յիսուսին այլակերպութիւնը տեսնելով ի՞նչ եղան:

5) Պետրոս ի՞նչ ըսաւ Յիսուսի:

6) Նոյն միջոցին ի՞նչ պատահեցաւ:

7) Լուսաւոր ամպին մէջէն եկող ձայնը ի՞նչ ըսաւ:

8) Աշակերտները Հօր Աստուծոյ ձայնը լսելով, ի՞նչ եղան եւ ի՞նչ ըրին:

9) Յիսուս, իր աշակերտներուն մօտենալով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:

10) Լեռնէն իջնելու ատեն, Յիսուս ի՞նչ պատուիրեց իր աշակերտներուն:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

«Այս է իմ սիրելի Որդիս, որուն եւ հաճեցայ. Անոր մտիկ ըրէք» (Մատթ. ԺԷ.5):

**Փարիսեցիին ու Մաքսատրին Առակը
(Ղուկ. ԺԸ.9-14)**

Իրենք զիրենք արդար սեպելով, ուրիշները արհամարհող պարծենկոտ մարդիկը զգաստութեան եւ իսկական ապաշխարութեան հրաւիրելու համար, Յիսուս պատմեց հետեւեալ առակը.— Երկու մարդիկ տաճար գացին աղօթելու համար. մէկը փարիսեցի* էր, իսկ միւսը՝ մաքսաւոր**:

Փարիսեցին, մէկ կողմ կեցած, ինքնիրեն կ'աղօթէր ըսելով, «Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ որ ուրիշ մարդոց պէս յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, եւ ոչ ալ այս մաքսաւորին նման: Այլ, շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ եւ իմ ամբողջ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ»:

Մաքսաւորն ալ հեռուն կեցած էր եւ իր մեղքերուն ահաւորութիւնը զգալով, չէր համարձակեր աչքերը եր-

* Փարիսեցիները հրեաներու մէջ կրօնական մոլեռանդ եւ ձեւապաշտ խնդրակցութեան մը անդամներն էին, որոնց պարտականութիւնն էր ջերմօրէն փարիլ իրենց կրօնքին ու սահմանութիւններուն: Անոնք թէեւ իրենց կրօնքին ծեսերն ու արտաքին սովորութիւնները կը պահէին, սակայն ներքեակէս հպարտ ու ապականած մարդիկ էին. կեղծաւորութիւնով կը ջանային իրենք զիրենք արդար ցուցնել ու արհամարհել ուրիշները: Ասոնց մէջ շատ քիչ էր թիւը իսկական բարեպաշտներուն: Ներկայիս, փարիսեցի բառը հոմանիշ դարձած է կեղծաւոր բառին:

** Մաքսաւորները կառավարական պաշտօնեաներ էին, որոնք ժողովուրդէն տուրքեր կը գանձէին: Սակայն, անոնք առհասարակ օրինաւոր տուրքերէն զատ անելորդ դրամ ալ կը գանձէին ժողովուրդէն եւ իրենց պաշտօնը օգտագործելով անիրաւութիւններ կ'ընէին: Յիսուսի ժամանակ, մաքսաւոր բառը հոմանիշ դարձած էր մեղաւոր բառին:

կինք վերցնել, այլ կը զղջար ու կու լար եւ իր կուրծքը ծեծելով կ'ըսէր, «Աստուած ներէ՛ մեղաւորիս մեղքերը»:

Յիսուս, այս առակը պատմելէ ետք ըսաւ.

— Մաքսաւորը աւելի արդարացած գնաց իր տունը՝ քան միւսը: Վասնզի, ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հպարտ փարիսեցիին Աստուծոյ առջեւ ինքզինք գովելով եւ ուրիշները անարգելով, իր մեղքերը աւելի բազմացուց: Մինչ մեղաւոր մաքսաւորը աւելի արդարացած դուրս ելաւ տաճարէն, քանի որ Աստուծոյ առջեւ խոնարհելով, խոստովանեցաւ իր մեղքերը եւ թողութիւն խնդրեց:

Հպարտութիւնը մահացու մեղք է: Հպարտ ու գոռոզ մարդիկ չեն կրնար մտնել Աստուծոյ արքայութիւնը:

Մենք գմեզ արդար նկատելով՝ անարգելու չենք ուրիշները: Այլ, միշտ յիշելու ենք, թէ մեղաւորներ ենք ու պետք ունինք Աստուծոյ ողորմութեան ու գթութեան: Ուստի, երբ աղօթքի կենանք, խոնարհ սրտով թողութիւն խնդրենք մեր մեղքերուն համար ու հայցենք Աստուծոյ կամքը՝ ամէն բանի մէջ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Որո՞նք տաճար գացին աղօթելու:
- 2) Փարիսեցիին ի՞նչ կ'ըսէր իր աղօթքին մէջ:
- 3) Մաքսաւորը ինչո՞ւ համար չէր համարձակեր իր աչքերը երկինք վերցնել:

- 4) Մաքսաւորը ի՞նչ ըսելով կ'աղօթէր:
- 5) Ո՞վ անելի արդարացած դուրս ելաւ տանարէն:
- 6) Ով որ իր անձը բարձրացնէ, ի՞նչ պիտի ըլլայ:
- 7) Ով որ իր անձը խոնարհեցնէ, ի՞նչ պիտի ըլլայ:
- 8) Ի՞նչ կը տրվեցնէ մեզի այս առակը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Ղուկ. ԺԸ.14):

ԺԳ. Դաս

Ղազարոսին Յարութիւնը

(Յովհ. ԺԱ.1-46)

Երուսաղէմի մօտ, Բեթանիա գիւղին մէջ Յիսուս ունէր շատ սիրելի բարեկամ մը՝ Ղազարոս անունով: Յիսուս յաճախ կ'այցելէր անոր տունը իր աշակերտներով: Ղազարոս ունէր երկու բարեպաշտ քոյրեր՝ Մարթա եւ Մարիամ:

Օր մը, Ղազարոս ծանր աստիճան հիւանդացաւ: Իր քոյրերը լուր ղրկեցին Յիսուսին, որ գայ եւ բժշկէ իրենց եղբայրը: Այդ օրերուն Յիսուս կը գտնուէր Յորդանան գետին քով ուր կը քարոզէր եւ հրաշքներ կը կատարէր:

Յիսուս, Ղազարոսին հիւանդութիւնը լսելով ըսաւ.

— Այդ հիւանդութիւնը մահուան համար չէ, այլ՝ Աստուծոյ փառքին համար, որպէսզի Աստուծոյ Որդին ատով փառաւորուի:

Յիսուս, այս լուրը առնելով, անմիջապէս Բեթանիա չգնաց, այլ երկու օր եւս մնաց հոն՝ ուր կը գտնուէր, եւ ապա ըսաւ իր աշակերտներուն:

— Եկէք, նորէն Հրէաստան երթանք:

— Հրեաներ քեզ կը փնտոէին քարկոծելու համար, ու նորէն հո՞ն պիտի երթաս, հարց տուին աշակերտները իրեն:

— Ղազարոս մեր բարեկամը քնացեր է, պիտի երթամ, արթնցնեմ զայն, պատասխանեց Յիսուս:

Աշակերտները կարծեցին թէ Յիսուս սովորական քունի մասին կը խօսի, ուստի ըսին իրեն.

— Տէր, եթէ քնացեր է, ուրեմն կ'ապրի:

Այն ատեն, Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց.

— Ղազարոս մեռաւ, եւ ես ուրախ եմ որ հոն չէի, որպէսզի դուք հաւատաք:

Երկու օր ճամբորդելէ ետք, Յիսուս իր աշակերտներով հասաւ Բեթանիա գիւղը, մինչ Ղազարոսին անշնչացած մարմինը արդէն գերեզմանի մէջ դրուած էր չորս օրէ ի վեր:

Ղազարոսի մեծ քոյրը՝ Մարթա, Յիսուսին գալուստը իմանալով զԱյն դիմաւորեց եւ ըսաւ.

— Տէր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրս կը բժշկէիր եւ ան չէր մեռներ. բայց հիմա, ալ վստահ եմ, որ ինչ որ Աստուծոյն ուզես՝ Աստուծոյն քեզի կու տայ:

— Քու եղբայրդ յարուսիւն պիտի առնէ, ըսաւ Յիսուս Մարթային:

— Գիտեմ որ վերջին օրը յարուսիւն պիտի առնէ, պատասխանեց Մարթա:

Յիսուս ըսաւ իրեն.

— Ես եմ յարուսիւնը եւ կեանքը, ան որ ինծի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի. իսկ ան, որ ողջ է եւ ինծի կը հաւատայ, երբեք պիտի չմեռնի: Դուն կը հաւատաս աոոր:

— Այո, Տէր, կը հաւատամ, որ դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր, ըսաւ Մարթա, եւ ապա գնաց իր քրոջ Մարիամին քով ու գաղտնաբար լուր տուաւ անոր, թէ Յիսուս գինք կը կանչէր:

Մարիամ, անմիջապէս տունէն դուրս ելաւ ու Յիսուսը տեսնելու գնաց: Ցաւակցութեան համար իրենց տունը հաւաքուած ազգականներն ու ծանօթները Մարիամին ետեւէն գացին՝ կարծելով թէ ան իր եղբոր գերեզմանին վրայ լալու կ'երթար:

Մարիամ, երբ Յիսուսը տեսաւ, անոր ոտքերուն ինկաւ եւ ըսաւ.

— Տէր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ:

Յիսուս, երբ տեսաւ Մարիամը որ կու լար, ինչպէս նաեւ անոր հետ եղող հրեաները որոնք կու լային, յուզուած ըսաւ.

— Ո՞ւր թաղեցիք զայն:

Անոնք ըսին:

— Եկուր եւ տես:

Յիսուս, լացաւ: Հոն գտնուողները իրարու կ'ըսէին, «Տեսէք, ո՛րքան կը սիրէր Ղազարոսը»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին, «Ասիկա որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս մը ընել, որ Ղազարոսը չմեռնէր»:

Յիսուս դարձեալ յուզուեցաւ, մօտեցաւ գերեզմանին, որ քարայր մըն էր, եւ որուն մուտքին քար մը դրուած էր:

— Վերցուցէք այդ քարը, ըսաւ Յիսուս:

— Տէր, եղբորս մարմինը մինչեւ հիմա արդէն նեխած պիտի ըլլայ, որովհետեւ չորս օրէ ի վեր թաղուած է, ըսաւ Մարթա Յիսուսի:

— Քեզի չըսի՞ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես, պատասխանեց Յիսուս Մարթային:

Երբ անոնք գերեզմանի դռնէն քարը վերցուցին, Յիսուս աչքերը վեր բարձրացուց, աղօթեց եւ ապա բարձրաձայն կանչեց.

— Ղազարո՛ս, դո՛ւրս եկուր:

Յիսուսի այս խօսքին վրայ, չորս օրուան մեռած Ղազարոսը իսկոյն վերակենդանացաւ եւ գերեզմանէն դուրս ելաւ՝ ոտքերը կապուած, ձեռքերը երիզներով պնդուած եւ դէմքը վարչամակով փաթթուած:

— Քակեցէ՛ք պատանքը եւ ձգեցէ՛ք որ երթայ, ըսաւ Յիսուս:

Հոն գտնուող մարդիկը այս հրաշքը տեսնելով զարմացան եւ շատեր հաւատացին Յիսուսի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ղազարոսի յարութիւնը մեծ ապացոյց մը եղաւ Յիսուսի ամենակարող աստուածութեան եւ երկնառաք Մեսիա (Քրիստոս) ու Փրկիչ ըլլալուն: Հոն գտնուողներէն շատեր հաւատացին ու դաւանեցան թէ Որդի Աստուծոյ էր Յիսուս, որ պիտի յարուցանէր բոլոր անջեցեալները:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ո՞վ էր Ղազարոս:
- 2) Ի՞նչ պատահեցաւ Ղազարոսին:
- 3) Ղազարոս քանի՞ քոյր ունէր: Տոյր անունները:
- 4) Յիսուս, Ղազարոսի հիւանդութեան լուրը առնելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 5) Յիսուս, իր աշակերտներուն ինչպէ՞ս յաշտեց Ղազարոսին մահը:
- 6) Աշակերտները ի՞նչ ըսին Յիսուսի:
- 7) Մարթա Յիսուսը դիմաւորելով ի՞նչ ըսաւ:
- 8) Յիսուս ի՞նչ պատասխանեց Մարթայի:
- 9) Մարթա, իր քրոջ քով երթալով ի՞նչ ըսաւ:
- 10) Մարիամ, Յիսուսի ոտքերուն իջնալով ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 11) Ղազարոս քանի՞ օրէ ի վեր մեռած էր:
- 12) Յիսուս ի՞նչ ըսելով կանչեց Ղազարոսը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի» (Յովհ. ԺԱ.25):

ԺԴ. Դաս

Յիսուսի Յաղթական Մուտքը Երուսաղէմ

(Մատթ. ԻԱ.1-16)

Ղազարոսի յարութենէն, ետք Յիսուսի ժողովրդականութիւնը սկսաւ բազմապատկուիլ: Շատեր, այդ մեծ հրաշքը տեսնելով Յիսուսի յարեր էին. սակայն ոմանք ալ գացեր էին հրեայ քահանայապետներուն եւ իշխաններուն քով եւ անոնց պատմեր էին Յիսուսի կատարած այդ մեծ հրաշքը:

Հրեայ ղեկավարները չէին հանդուրժեր, որ Յիսուսի անունը փառաւորուէր: Ուստի, նախանձէ դրդուած, որոշեցին զԱյն սպաննել: Յիսուս գիտէր այդ բոլորը. սակայն աշխարհի փրկութեան համար կը պատրաստուէր յօտարակամ կրելու այն բոլոր չարչարանքներն ու տանջանքները, որոնք պիտի հասնէին իր վրայ՝ մօտ ատենէն Երուսաղէմի մէջ:

Հրեաներու Զատկի տօնը մօտեցած էր եւ ամէն կողմերէ ուխտաւորներու խումբեր կը հասնէին Երուսաղէմ՝ տօնական հանդիսութիւններու մասնակցելու համար: Յիսուս եւս իր աշակերտներով ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ: Երբ Բեթբազէ գիւղին մօտեցան, իր աշակերտներէն երկուքը զրկեց ըսելով.

— Այդ ձեր դիմացի գիւղը գացէք. հոն պիտի գտնէք կապուած էշ մը եւ անոր հետ աւանակ մը: Արձակեցէք զանոնք եւ ինձի բերէք. իսկ եթէ ոեւէ մէկը ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ տիրոջը պէտք են, եւ իսկոյն թոյլ պիտի տայ ձեզի:

Աշակերտները գացին եւ գտան կապուած էջն ու աւանակը եւ քակելու սկսան: Հոն եղողներէն ոմանք ըսին:

— Ի՞նչ կ'ընէք. ինչո՞ւ կ'արձակէք զանոնք:

— Տիրոջը պէտք են, պատասխանեցին աշակերտները եւ մարդիկ թոյլ տուին:

Աշակերտները, էջն ու աւանակը բերին եւ անոնց վրայ դրին իրենց զգեստները: Յիսուս նստաւ աւանակին վրայ եւ սկսան յառաջանալ դէպի Երուսաղէմ՝ օրհնութեան երգեր երգելով: Իրենց միացան ուխտաւորներու խումբեր եւ թափօրը երթալով ստուարացաւ:

Երբ Յիսուսի գալստեան լուրը Երուսաղէմ հասաւ, բազմահազար մարդիկ ձեռքերնին արմաւենիի ոստեր ու ձիթենիի ճիւղեր բռնած՝ ճամբայ ելան զինք դիմաւորելու: Ժողովուրդէն շատեր իրենց զգեստները տարածեցին ճամբուն վրայ, մինչ ուրիշներ ձիթենիի ճիւղեր կը տարածէին: Զիթենեաց լերան զառիվայրին ցնծութիւնը իր գագաթնակէտին հասաւ: Աշակերտներու բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ բարձրաձայն զԱստուած օրհնել՝ Յիսուսի կողմէ կատարուած բոլոր հրաշքներուն համար: Ամէնը կ'աղաղակէին ու կ'ըսէին, «Ով սաննա՞ Բարձրեալիմ, օրհնեա՛լ ըլլաւ դուն որ կու գաս Տիրոջ անունով, օրհնեալ ըլլաւ քու թագաւորութիւնդ, մեր հօր Դաւիթի թագաւորութիւնը, որ կու գայ, իսրայէլի՛ւն երկինքի մէջ եւ փա՛ռք Բարձրեալիմ»:

Բազմութեան մէջ գտնուող կարգ մը փարիսեցիներ, Յիսուսի վայելած ժողովրդականութիւնը տեսնելով եւ «Ով սաննա» աղաղակները լսելով, նախանձեցան Յիսուսի փառաւորութեան, եւ ամբոխին մէջէն ըսին.

— Վարդապետ, սաստէ աշակերտներդ:

Յիսուս անոնց պատասխանեց.

* Ով սաննա կը նշանակէ՝ կ'աղաչես փրկէ: Հետագայիմ, ով սաննա բառիմ նշանակութիւնը փոխուեցաւ եւ մարդիկ սկսան արտասանել օրհնեալ ըլլալ ըսելու իմաստով:

— Եթէ ատոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն:

Երբ Յիսուս մեծ բազմութիւնով եւ օրհնութեան ձայներով Երուսաղէմ մտաւ, բոլոր քաղաքը թնդաց: ամէն կողմէ մարդիկ սկսան իրարու հարցնել, «Ո՞վ է սա», ու բերնէ բերան տարածուեցաւ թէ եկողը Յիսուս մարգարէն էր Գալիլիոյ Նազարէթ քաղաքէն:

Բազմութեան թափօրը ուղղուեցաւ Երուսաղէմի տաճարը: Յիսուս երբ Աստուծոյ տունը մտաւ, տեսաւ թէ մարդիկ այնտեղ առուտուրով կը զբաղին եւ զայն վերածեր են շահու աղբիւրի մը: Ուստի, զանոնք դուրս վճնտեց ու կործանեց լուծայափոխներու սեղաններն ու աղանի ծախողներուն աթոռները, եւ ըսաւ՝

— Գրուած է՝ «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի»: մինչ դուք զայն աւազակներու որջի վերածած էք:

Ետքը, Յիսուս տաճարին մէջ իրեն եկող կաղերն ու կոյրերը բժշկեց:

Հրեայ քահանայապետներն ու դպիրները այս բաները տեսնելով հանդերձ՝ չուղղուեցան, ընդհակառակը՝ ատելութեամբ լեցուեցան Յիսուսի հանդէպ: Իսկ երբ տեսան թէ մանուկներ տակաւին «օրհնութիւն որդւոյ Դաւիթի» կ'աղաղակեն, բարկացան ու ըսին Յիսուսի.

— Կը լսե՞ս, ի՞նչ կ'ըսեն ատոնք:

Յիսուս Աստուածաշունչի մարգարէական գիրքերէն մէջբերում ընելով՝ պատասխանեց անոնց.

— Այո, բնաւ չէ՞ք կարդացեր, «Մանուկներու ու կաթընկեր երեխաներու բերնով գովեստ հիւսեցիր» խօսքը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուս, որպէս իսրայէլեացի թագաւոր, իշու վրայ նստած մտաւ Երուսաղէմ եւ ցնծութեամբ դիմաւորուեցաւ հաւատացեալ բազմութեան կողմէ իբրեւ Փրկիչ:

Այժմ, Յիսուս անբերութեամբ անբկայ է ամէն տեղ եւ կ'ուզէ մտնել մեր սրտերէն անբս: Մեր պարտականութիւնն է ցնծութեամբ դիմաւորել եւ ընդունիլ զԱյն, որպէսզի Ան մեր մէջ բնակի ու մեզ սրբէ մեղքերէ: Իւրաքանչիւր քրիստոնեայ տաճար մըն է, որուն մէջ պէտք է անբկայ ըլլայ Յիսուս:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Ինչո՞ւ համար Յիսուս իր երկու աշակերտները Բեթ-բազէ գիղը դրկեց:
- 2) Կապուած էջն ու աւանակը արձակելու ատեն, հոն գրտնուող մարդիկը ի՞նչ ըսին:
- 3) Յիսուսի աշակերտները ի՞նչ պատասխանեցին:
- 4) Յիսուս ինչո՞ւ համար բերել տուաւ էջն ու աւանակը:
- 5) Բազմութիւնը ինչպէ՞ս դիմաւորեց Յիսուսը:
- 6) Յիսուսի աշակերտներն ու ժողովուրդը ի՞նչ կ'աղաղակէին:
- 7) Ծատեր ի՞նչ կը տարածէին ճամբուն վրայ:
- 8) Փարիսեցիներն ու դպիրները ի՞նչ ըսին Յիսուսի:
- 9) Յիսուս ի՞նչ պատասխանեց անոնց:
- 10) Յիսուս ի՞նչ ըրաւ տաճարին մէջ առուտուր ընողներուն:
- 11) Ի՞նչ կը նշանակէ ովսաննա:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ովսաննա՛ Բարձրեալին, օրհնեալ՛ ըլլաս դուն որ կու գաս Տիրոջ անունով». (Մարկ. ԺԱ.9):

ԺԵ. Դաս

Տաճարի Կործանումին Գուշակութիւնը Եւ Քրիստոսի Երկրորդ Գալուստը

(Մատթ. ԻԴ.1-44)

Յիսուս, տաճարէն դուրս ելլելու ատեն, աշակերտներէն մէկը տաճարին շքեղութիւնը ցուցնելով ըսաւ իրեն.

— Վարդապետ, նայէ, ի՞նչ գեղեցիկ քարեր են եւ ի՞նչ հոյակապ շինուածք:

Յիսուս պատասխանեց.

— Կը տեսնէ՞ք այդ բոլոր շինութիւնները. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ամէնքն ալ պիտի քանդուին, քար քարի վրայ պիտի չմնայ:

Երբ Զիթենեաց լեռը ելան, աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին.

— Տէր, ըսէ ձեզի, ե՞րբ պիտի ըլլան այդ բաները եւ քու գալուստիդ ու աշխարհի վախճանին նշանը ի՞նչ պիտի ըլլայ:

Յիսուս, սկսաւ խօսիլ ու պատմել տաճարի կործանումէն ու իր երկրորդ գալուստէն առաջ պատահելիք հետեւեալ դէպքերը.—

1) Շատեր պիտի գան ու ըսեն թէ իրենք Քրիստոսն են եւ պիտի մոլորեցնեն մարդիկը:

2) Պիտի ըլլան մեծ պատերազմներ: Ազգ ազգի վրայ պիտի ելլէ ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ:

3) Զանազան տեղեր պիտի պատահին սով, սրածութիւն (ժանտախտ) ու խռովութիւն. սակայն այդ բաները դեռ ցաւերուն սկիզբն են:

4) Մարդիկ պիտի հալածեն ու բանտարկեն Յիսուսի աշակերտներն ու հետևորդները եւ զանոնք դատաւորներու, թագաւորներու առջեւ հանեն:

5) Քրիստոսի հաւատացողներէն շատեր, իրենց ծնողներուն, եղբայրներուն, ազգականներուն եւ բարեկամներուն կողմէ պիտի մատնուին ու սպաննուին:

6) Շատ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերը պիտի մոլորեցնեն:

7) Անօրէնութիւնը եւ մեղքը պիտի շատնայ եւ այդ պատճառով Աւետարանին հանդէպ շատերուն ունեցած սէրը պիտի ցամքի:

8) Արքայութեան Աւետարանը պիտի քարոզուի բովանդակ աշխարհի ու յետոյ պիտի գայ կատարածը:

9) Երուսաղէմ՝ զօրքերով պիտի պաշարուի ու տաճարին սուրբ տեղը՝ պիտի պղծուի:

10) Մեծ նեղութիւն մը պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի սկիզբէն ի վեր եղած չէ:

Յիսուս, այս գուշակութիւնները ըրաւ եւ պատուիրեց իր աշակերտներուն, որ աղօթեն ու ամուր մնան իրենց հաւատքին վրայ, չխաբուին գալիք սուտ քրիստոսներէն ու մարգարէներէն, որոնք մոլորեցուցիչներ պիտի ըլլան: Պատուիրեց նաեւ անոնց, որ երբ Երուսաղէմը պաշարուած տեսնեն, անկէ դուրս ելլեն ու փախչին, քանի որ քաղաքը պիտի զրաւուէր եւ պիտի մատնուէր հուրի եւ սուրի:

Այս բաները պատմելէ եւ իր աշակերտները զգուշացրնելէ ետք, Յիսուս խօսեցաւ իր երկրորդ գալստեան ու աշխարհի կատարածին մասին՝ եւս հետեւեալ խօսքերը.—

* Երուսաղէմի տաճարին Սրբութիւն Սրբութեանց սրահն էր Սուրբ տեղը, որ կրճար մտնել միայն քահանայապետը՝ տարին մէկ անգամ զոհին արհնը ձեռք առած՝ ներսը սրկելու համար: Քահանայապետը, հոն քառութիւն կ'ընէր իր եւ իր ժողովուրդին մեղքերուն համար:

«Ինչպէս որ փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մինչեւ արեւմուտք կը տեսնուի, այնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը... Եւ նեղութեան այդ օրերէն անմիջապէս յետոյ, արեգակը պիտի խաւարի, լուսինը իր լոյսը պիտի չտայ, աստղերը երկինքէն պիտի իյնան ու երկինքի զօրութիւնները պիտի շարժին: Ապա պիտի երեւի Մարդու Որդիին նշանը (խաչը) երկինքի վրայ... Ու Մարդու Որդին պիտի գայ երկինքի ամպերուն վրայ նստած, մեծ փառքով ու զօրութեամբ: Անիկա իր հրեշտակները պիտի դրկէ մեծածայն փողով ու պիտի ժողվեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն միւսը...»

«Իսկ այն օրուան ու ժամուան մասին, ոչ ոք բան մը գիտէ, ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, այլ միայն Հայրը:

«Ինչպէս Նոյի օրերը մարդիկ չարութեան ետեւէ էին եւ ջրհեղեղը գալով ամէնը վերցուց, Մարդու Որդիին գալստեան ատեն ալ այնպէս պիտի ըլլայ: Այն ատեն եթէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի, ու միւսը ձգուի. եւ եթէ երկու կին մէկ աղօրիքի վրայ աղալու ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի: Ուրեմն արթուն կեցէք, վասնզի չէք գիտեր թէ ձեր Տէրը որ ժամուն կու գայ»:

Յիսուս, այս խօսքերը խօսեցաւ ու յորդորեց, որ ամէն ոք պատրաստ գտնուի իր երկրորդ գալստեան ատեն:

Երուսաղէմի Տաճարին կործանումը:

70 Թուականին, այսինքն Յիսուսի յարութենէն 37 տարի ետք, կատարուեցաւ Երուսաղէմի մասին Յիսուսի գուշակութիւնը:

Յիսուսի ըսածին համաձայն, հաւատացեալ քրիստոնեաներ հալածուեցան ու անոնցմէ շատերն ալ սպաննուեցան: Սակայն արքայութեան Աւետարանը քարոզուեցաւ աշխարհի ամէն կողմերը: Մէջտեղ եկան սուտ քրիստոսներ ու սուտ մարգարէներ եւ մոլորեցուցին շատերը: Հրեաներուն անօրէնութիւնը, մեղքն ու չարութիւնը իր գազաթնակէտին հասաւ: Անոնք ապստամբեցան հռովմէական կայսրութեան դէմ եւ ջարդեցին անոր զօրքերը: Հռովմայեցիները, Տիոտոս զօրավարը զրկեցին Պաղեստին մեծ զօրքով եւ ան պաշարեց Երուսաղէմը: Քաղաքին մէջ գտնուող քրիստոնեաներ, Յիսուսի մարգարէութիւնը յիշելով, պաշարման օղակը չսեղմուած, դուրս փախան ու ապաստանեցան ապահով վայր մը:

Ապստամբութեան ղեկավարները, Երուսաղէմի պաշտպանութեան համար գրաւեցին տաճարը եւ գայն գործածեցին որպէս միջնաբերդ. աստուածային օրէնքի ու սրբութեան պահանջներուն հակառակ շարժելով, Սրբութիւն Սրբութեանց սրահին մէջ գէնքեր, զինուորներ մտցնելով եւ տաճարին ամէն կողմերը վիրաւորեալներ ու մեռեալներ լեցնելով պղծեցին գայն:

Հռովմայեցիները, հետզհետէ սեղմեցին պաշարման օղակը: Քաղաքին մէջ տիրեց սոսկալի սով մը: Շատեր, փորձեցին դուրս փախչիլ, սակայն հռովմայեցի զինուորներէն բռնուելով սպաննուեցան:

Ի վերջոյ, Տիոտոսի զինուորները գրաւեցին Երուսաղէմը, ուր մէկ միլիոնէ աւելի հրեաներ կային այն ատեն: Առանց խնայելու կոտորեցին անոր բնակիչները ու կործանեցին քաղաքը: Տիոտոս զօրավարը, հրամայած էր խնայել տաճարին՝ անոր գեղեցիկ շինուածքին համար, սակայն, արկածով մը կրակ առաւ այդ հոյակապ կառոյցը եւ կործանեցաւ ու գետնին հաւասար դարձաւ: Զարդէն մազապուրծ ազատուած մնացորդ ժողովուրդն ալ գերի բռնուեցաւ:

Այս ձեւով, հրեայ ազգը պատժուեցաւ իր գործանքի մեղքերուն եւ անօրէնութիւններուն պատճառ ու ցրուեցաւ աշխարհի ամէն կողմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի կործանումը օրինակն է նաեւ, աշխարհ կատարածին պատահելիք աղետներուն, որոնք աւելի բուռն պիտի ըլլան:

Յիսուսի երկրորդ գալուստէն առաջ, դարձեալ անօրէնութիւնը եւ մեղքը պիտի բազմանան ու չար մարդիկ պիտի արիւմարեան, ծաղրեն ու հալածեն հաւատացեալները: Շատեր պիտի ըսեն, «ո՛ր է Յիսուսի գալուստեան խոստումը»: Սակայն այդ օրը, յանկարծ պիտի գայ: Քրիստոսի գալուստեան ատեն, հրեշտակապետը իմ փողը պիտի հնչեցնէ եւ բոլոր մեռեալները յարութիւն պիտի առնեն: Ամէն անոնք, որոնք Քրիստոսով անջաճ են, յարութիւն առնելով պիտի միանան իրենց Տիրոջ: Իսկ անոնցմէ վերջ այս աշխարհի վրայ արդարութեամբ ապրող քրիստոնեաները վեր պիտի բարձրանան:

Յիսուս, իր երկրորդ գալուստէն վերջ, պիտի կատարէ մեծ դատաստան մը: Ամէն անոնք, որոնք արդարութեամբ ապրած են, պիտի վարձատրուին, իսկ ամէն անոնք, որոնք անօրէնութիւն գործեր են, պիտի պատժուին դժոխքի անշէջ կրակին մէջ:

Այս բոլորէն ետք, Քրիստոս պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտենից եւ արդարները պիտի ցնծան ու բերկրին երկինքի արքայութեան մէջ:

Սուրբ եկեղեցւոյ գաւակներուն պարտականութիւնն է միշտ արթուն մնալ, համբերել, աղօթել եւ ակընդէտ սպասել Քրիստոսի երկրորդ գալուստեան:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Տաճարէն դուրս ելլելու ատեն, աշակերտներէն մէկը ի՞նչ ըսաւ Յիսուսի:
- 2) Յիսուս ի՞նչ ըսաւ տաճարին համար:
- 3) Զիթենեաց լերան վրայ, աշակերտները ի՞նչ հարցուցին Յիսուսի:
- 4) Յիսուս ի՞նչ քաներ պատմեց անոնց:
- 5) Երուսաղէմ ինչո՞ւ համար պիտի կործանէր:
- 6) Երուսաղէմի մասին Յիսուսի մարգարէութիւնը կատարուեցա՞ւ:
- 7) Որո՞նք պաշարեցին Երուսաղէմը:
- 8) Պաշարումին սկիզբը, քաղաքին քրիստոնեաները ի՞նչ ըրին:
- 9) Յիսուսի երկրորդ գալուստէն առաջ, ինչ քաներ պիտի պատահին:
- 10) Յիսուսի երկրորդ գալուստէն առաջ, երկինքի մէջ որո՞ւ նշանը պիտի երեւի:
- 11) Յիսուս իր երկրորդ գալուստէն ետք ի՞նչ պիտի ընէ:
- 12) Անօրէնութիւն գործող չարերուն վախճանը ի՞նչ պիտի ըլլայ:
- 13) Եկեղեցոյ զաւակներուն պարտականութիւնը ի՞նչ է:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Գալոց Է Աովին մարմնովն եւ փառօք Հօր, ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թազարութեանն ոչ գոյ վախճան»: «ՀԱԻԱՏԱՄԲ»

ԺԶ. Դաս

Տասը Կոյսերուն Առակը

(Մատթ. ԻՆ. 1-13)

Յիսուս, իր սուրբ եկեղեցիին զաւակները մշտարթուն պահելու համար՝ ըսաւ նաեւ հետեւեալ առակը.—

Տասը կոյսեր կային, որոնք իրենց լապտերները առնելով փեսան դիմաւորելու ելան: Այս կոյսերուն հինգը իմաստուն էին եւ հինգը յիմար: Իմաստունները նկատի ունեցան, որ փեսան կրնար ուշանալ եւ իրենց լապտերներուն իւրը հատնէր, ուստի, ամաններով պահեստի իւր ալ առին: Իսկ յիմարները անհոգ գտնուելով՝ իրենց հետ աւելորդ իւր չառին:

Երբ փեսան ուշացաւ, բոլորն ալ մրափեցին ու քնացան: Կէս գիշերին յանկարծ ձայն առին որ կ'ըսէր, «Ահա փեսան կու գայ, զայն դիմաւորելու ելէք»: Այն ատեն, բոլոր կոյսերն ալ ելան եւ պատրաստեցին իրենց լապտերները, որոնց իւրերը հատնելու վրայ էին: Իմաստունները, իրենց բերած պահեստի իւրերը լեցուցին

* Հին ատեն հարսանիքները կը կատարուէին գիշերը: Հարսին կ'ընկերանային կոյս աղջիկներ՝ շքեղ հագուստներով: Երբ փեսան իր հետեւորդներով հարսին տունը հասներ, կոյսերը լապտերներով կը դիմաւորէին զայն ու կ'առաջնորդէին հարսին քով: Հարսնառի արարողութիւնը վերջանալէ ետք, հարսին ընկերացող կոյսերը հարսանեկան թափօրին մաս կազմելով, կ'երթային փեսային տունը: Երբ հարսները գերս մտնէին, դռները կը փակուէին ու կը սկսէր հարսանեկան ուրախութիւնը:

Երբեմն, կը պատահէր որ փեսան կ'ուշանար եւ հարսները երկար ատեն կը սպասէին: Հարսին ընկերացող կոյսերը պարտաւոր էին վառած պահել իրենց լապտերները՝ մինչեւ փեսային գալուստը, որպէսզի անակնկալի չգային:

լապտերներուն մէջ ու պատրաստուեցան փեսան դիմա-
ւորելու: Յիմար կոյսերը պահեստի իւղ չունենալով
չուարեցան եւ ըսին իմաստուններուն:

— Ձեր իւղերէն քիչ մը մեզի տուէք, որովհետեւ մեր
լապտերները ահա կը մարին:

Իմաստուն կոյսերը պատասխանեցին:

— Թերեւս մեզի եւ ձեզի չբաւէ, գացէք վաճառող-
ներուն եւ անոնցմէ գնեցէք:

Յիմար կոյսերը գիշերով գացին իւղ գնելու: Անոնց
մեկնելէն ետք, յանկարծ փեսան եկաւ: Իմաստուն կոյ-
սերը իրենց վառած լապտերներով դիմաւորեցին գայն
եւ ապա հարսանեկան թափօրին միանալով գացին փե-
սային տունը: Երբ հարսնեւորները ներս մտան, դուռը
փակուեցաւ:

Յիմար կոյսերը երբ վերադարձան, տեսան թէ փեսան
եկեր ու հարսնեւորներն ալ միասին առնելով գացեր է:
Անմիջապէս ճամբայ ելան անոնց ետեւէն հասնելու,
սակայն, երբ փեսային տունը հասան, դուռը փակուած
գտան:

Ուշացող յիմար կոյսերը սկսան դուռը ծեծել եւ ըսել:

— Տէ՛ր, տէ՛ր, դուռը բա՛ց մեզի:

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ չեմ ճանչնար ձեզ, ըսաւ
փեսան:

Յիմար կոյսերը իրենց անխոհեմութեան պատճառով,
մնացին դուրսը՝ խաւարի մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բոլոր մարդիկ, հրաւիրուած են երկնային հարսանի-
քին (երկիւնքի արքայութեան), որուն փեսան (Քրիս-
տոս) պիտի գայ աշխարհի կատարածին՝ ամպերու վրայ
նստած ու մեծ փառքով: Ոեւէ մէկը չի գիտեր թէ Ան

երբ պիտի գայ, սակայն յայտնի է թէ պիտի գայ:
Ուստի, իմաստուն կոյսերու պէս պատրաստ ըլլանք եւ
մեր լապտերները մշտապէս վառ պահելու համար,
պահեստի իւղ ունենանք, այսինքն՝ աղօթքով, սուրբ
գրային ընթերցումներով զօրանանք եւ առաքինութեան
ու բարեգործութեան ետեւէ ըլլանք: Մեր հաւատքը իր
ետին բարի պտուղներ ունենալու է, որպէսզի մեր Տիրոջ
ահաւոր գալստեան առեմ, արժանի ըլլանք գինք դիմա-
ւորելու:

Այս աշխարհի մէջ մեզի շնորհուած ժամանակը մեր
հոգիներու փրկութեան համար օգտագործելու ենք,
հակառակ պարագային ուրիշ առիթ պիտի չանցնի մեր
ձեռքը եւ յիմար կոյսերու նման դուրսը՝ խաւարի մէջ
պիտի մնանք, ուրկէ ազատում պիտի չըլլայ:

Այս առակը կը հասկննէ նաեւ մեզի, թէ ոեւէ մէկը
չի գիտեր, թէ ե՞րբ պիտի մեռնի ու մեկնի այս
աշխարհէն: Ուստի չքերանանք մեր կրօնական պարտա-
կանութիւններուն մէջ, այլ ջանանք մեր մաքուր վար-
քով, Տիրոջ ողորմութեան ու շնորհքին արժանանալ ու
մտնել երկիւնքի արքայութիւնը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Քանի՞ կոյսեր ելան փեսան դիմաւորելու:
- 2) Իմաստուն կոյսերը իրենց հետ ի՞նչ առած էին:
- 3) Երբ փեսան ուշացաւ, կոյսերը ի՞նչ ըրին:
- 4) Փեսային գալստեան լուրը առնելով կոյսերը ի՞նչ ըրին:
- 5) Յիմար կոյսերը իմաստուններէն ի՞նչ խնդրեցին:
- 6) Իմաստունները ի՞նչ պատասխանեցին:
- 7) Յիմար կոյսերու բացակայութեան ո՞վ եկաւ:
- 8) Յիմար կոյսերը փակուած դուռը զարնելով ի՞նչ ըսին:

- 9) 'Ներսէն' փեսան ի՞նչ պատասխանեց:
- 10) Յիմար կոյսերը ո՞ր մնացին:
- 11) Այս առակը ի՞նչ կը սորվեցնէ մեզի:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Արթո՛ւն մնացէք, որովհետեւ չէք գիտեր թէ ձեր Տէրը երբ կու գայ» (Մատթ. ԻԴ.42):

ԺԷ. Դաս

Յիսուսի Վերջին Ընթրիքը եւ Մատնութիւնը (Մարկ. ԺԴ.10-31, Յովհ. ԺԳ.1-38)

Յիսուսի կողմէ կատարուած տաճարին մաքրագործումը, հրաշքները, պատգամներն ու առակները եւ մանաւանդ Անոր վայելած ժողովրդականութիւնը՝ հրեայ քահանայապետներուն եւ իշխաններուն նախանձն ու ատելութիւնը գրգռեցին եւ որոշեցին սպաննել զԱյն. սակայն, անոնք ժողովուրդէն վախնալով, չհամարձակեցան օր ցերեկով ձերբակալել: Ուստի, խորհեցան Յիսուսը բռնել ու մեռցնել այնպիսի ատեն մը եւ այնպիսի վայրի մը մէջ, որ ժողովուրդէն գաղտնի մնար իրենց նենգամիտ արարքը: Իրենց վատ ծրագիրը յաջողեցնելու համար, պէտք ունէին մէկու մը որ լրտեսէր Յիսուսը եւ յայտնէր իրենց անոր գտնուած վայրը: Խոստացած էին նաեւ կոկիկ գումար մը տալ այն անձին, որ պիտի մատնէր զԱյն իրենց:

Յիսուսի աշակերտներէն Յուզա իսկարիովտացին, որ արծաթասէր մէկն էր, ազահուժենէ մղուելով, գաղտնօրէն ներկայացաւ քահանայապետներուն եւ անոնց խոստացաւ իր վարդապետը մատնել երեսուն արծաթ դրամի փոխարէն: Յիսուս, որպէս Աստուածորդի զիտէր այս բոլորը:

Բաղարջակերաց տօնին* առաջին օրը, Յիսուս իր աշակերտներէն երկուքը ղրկեց ըսելով.

* Զատիկի տօնը յիշատակն էր իսրայէլացիներու Եգիպտոսէ ելլելուն: Այդ օր, իրաքանչիւր իսրայէլացի ընտանիք գառնուկ մը կը մորթէր եւ ընտանիքին բոլոր անդամները սեղանին շուրջը բոլորուելով, անոր խորովածը կ'ուտէին՝ բաղարջ (անխմոր) հացով եւ լեղի խոտերով: Ընթրիքի ժամանակ կ'երգէին անու սաղմոսներ եւ օրհնութեան երգեր:

— Քաղաք գացէք. հոն ձեզի պիտի հանդիպի մարդ մը, որ ուսին ջուրի սափոր մը ունի. անոր ետեւէն գացէք, եւ որ տունը որ մտնէ՝ ըսէք տանտիրոջ, «վարդապետը կ'ըսէ, ո՞ւր է այն սենեակը, ուր աշակերտներու հետ գատկական ընթրիքը պիտի ուտեմ»: Ան ալ ձեզի ցոյց պիտի տայ յարդարուած մեծ վերնատուն մը. հոն պատրաստեցէք գատկական ընթրիքը:

Աշակերտները գացին քաղաք եւ գտան այնպէս՝ ինչպէս որ Յիսուս իրենց ըսեր էր ու պատրաստեցին Զատիկի սեղանը:

Ընթրիքի ժամանակ, Յիսուս ոտքի ելաւ, մէջքին դէնջակ մը կապեց եւ կոնքին մէջ ջուր լեցնելով՝ սկսաւ իր աշակերտներուն ոտքերը լուալ ու սրբել դենջակով: Ապա, ետ սեղան նստաւ ու ըսաւ.

— Գիտէ՞ք թէ ինչ ըրի ձեզի: Դուք զիս վարդապետ եւ տէր կը կոչէք, եւ լաւ կ'ընէք, որովհետեւ իրապէս եմ: Արդ, եթէ ես, որ Տէր եւ վարդապետ եմ լուացի ձեր ոտքերը, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտքերը լուալու: Ես ձեզի օրինակ մը տուի:

Մինչ բոլորը կ'ուտէին, Յիսուս ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ:

Այս խօսքին վրայ, աշակերտները սաստիկ տրտմեցան եւ իւրաքանչիւրը սկսաւ Յիսուսի հարցնել, «միթէ ե՞ս եմ»:

Յիսուս ըսաւ.

— Ան որ ինձի հետ իր ձեռքը պնակը խոթեց, ան է, որ զիս պիտի մատնէ... աւելի լաւ էր այն մարդուն՝ որ բնաւ ծնած չըլլար:

Աշակերտները շփոթութեան մէջ ըլլալով, չկրցան ըստուգել, թէ ո՞վ էր ան, որ Յիսուսը պիտի մատնէր: Յիսուսի կողքին նստած էր իր սիրելի աշակերտը՝ Յովհաննէս: Պետրոս անդիէն աչք ըրաւ անոր, որ հարցնէր

Յիսուսին, թէ ո՞վ էր մատնիչը: Յովհաննէս, Յիսուսի կողմը դառնալով՝ հարցուց.

— Տէր, ո՞վ է ան որ քեզ պիտի մատնէ:

— Որու որ պատառը թրջելով տամ, անիկա է:

Այս խօսքէն վերջ, Յիսուս պատառը թաթխելով Յուդայի տուաւ: Յուդա, պատառը առնելէ ետք, կեղծաւորութեամբ հարցուց Յիսուսի.

— Միթէ ե՞ս եմ, վարդապետ:

— Այո՛, դուն ըսիր, ըսաւ Յիսուս:

Յուդա, խռովեալ վիճակ մը ունեցաւ, որովհետեւ, սատանան իր ներսիդին մտած էր: Յիսուս ըսաւ անոր.

— Ինչ որ պիտի ընես, շուտ ըրէ:

Յիսուսի այս խօսքին վրայ, Յուդա ոտքի ելաւ ու դուրս գնաց: Սեղան նստողներէն ոեւէ մէկը չհասկցաւ, թէ ան ինչու համար դուրս ելաւ: Ոմանք կարծեցին թէ Յիսուս անոր պատուիրած ըլլայ տօնին առթիւ անհրաժեշտ գնումներ ընելու եւ կամ այդ առիթով աղքատներուն բան մը տալու, քանի որ գանձանակը Յուդային քովն էր միշտ:

Յուդայի մեկնելէն ետք, Յիսուս եւ իր աշակերտները շարունակեցին ընթրիքը: Մինչ կ'ուտէին, Յիսուս սեղանէն հաց առաւ, օրհնեց, կտրեց եւ իր աշակերտներուն տալով ըսաւ.

— Առէք, կերէք, այս է իմ մարմինս, որ ձեզի համար տրուած է: Ասիկա ըրէք, զիս յիշելու համար:

Նոյնպէս ալ գինիին բաժակը առաւ, գոհացաւ ու անոնց տալով ըսաւ.

— Բոլորդ խմեցէք ասկէ, որովհետեւ ասիկա է նոր ուխտի իմ արիւնս, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար:

Այսպէս, Յիսուս հաստատեց սուրբ հաղորդութեան խորհուրդը եւ պատուիրեց իր աշակերտներուն, որ գայն կատարեն ամէն ատեն:

Այս արարողութենէն վերջ, Յիսուս յայտնեց իր աշակերտներուն, թէ իր ժամանակը հասած է ու հրեաներ պիտի գան, զինք բռնեն եւ մահուան դատապարտեն. սակայն ինք, երրորդ օրը յարութիւն պիտի առնէ: Նաեւ ըսաւ անոնց.

— Այս գիշեր, ամէնքդ ալ պիտի գայթակղիք եւ ցըր-
ւիք:

Պետրոս ըսաւ Յիսուսի.

— Տէր, ամէնքն ալ քու վրայովդ կրնան գայթակղիլ. սակայն ես բնաւ պիտի չգայթակղիմ:

Յիսուս պատասխանեց.

— Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, որ դուն ալ այս գիշեր, դեռ աքաղաղը երկու անգամ չկանչած, երեք անգամ պիտի ուրանաս զիս:

— Նոյնիսկ եթէ մեռնիլ պէտք ըլլայ քեզի հետ, քեզ պիտի չուրանամ, ըսաւ Պետրոս:

Նոյնը ըսին նաեւ միւս աշակերտները: Յիսուս, անոնց տկարութիւնը ճանչնալով, աղօթեց որ անոնք զօրանան: Քաջալերեց զանոնք ու պատուիրեց որ ընդ-
միշտ զիրար սիրեն: Սոստացաւ անոնց, զրկել ամենա-
զօր միտիթարիչ Սուրբ Հոգին՝ իր յարութենէն ետք:

Ընթրիքն ու իր յորդորական խօսքերը վերջացնելէ ետք, Յիսուս իր աշակերտներով գնաց քաղաքէն դուրս՝ Գեթսեմանիի պարտէզը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Արծաթասիրութիւնն ու դրամապաշտութիւնը մոլո-
րեցուցին Յուդան եւ ան իր սրտին մէջ սատանային տեղ
տալով, գնաց իր վարդապետը մատնելու: Ամէն չարու-
թիւններուն արմատը արծաթասիրութիւնն է, կ'ըսէ Աս-
տուծոյ խօսքը (Ա. Տիմ. 2.10): Ով որ ազահութեան
ստեւէ ըլլալով անձնատուր ըլլայ դրամի եւ ընչաքաղ-

ցութեան, կը մոլորի իր հաւատքէն ու կը կորսնցնէ իյ
հոգին:

2) Յիսուս, իր աշակերտներուն ոտքերը լուալով, անոնց
ցոյց տուաւ սիրոյ, խոնարհութեան եւ հեզութեան
օրինակ մը: Քրիստոնեաներ պարտաւոր են սիրել զիրար
ու խոնարհ սրտով ծառայել իրարու:

3) Յիսուս, վերջին ընթրիքի ատեն, հաստատեց սուրբ
հաղորդութեան խորհուրդը եւ պատուիրեց իր հետե-
ւորդներուն, որ ամէն ատեն գայն կատարեն: Այժմ,
բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջ կը կատարուի
սուրբ հաղորդութեան խորհուրդը, այսինքն՝ կը մա-
տուցուի սուրբ պատարագ եւ հաւատացեալներ կը
նաշակեն Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Սուրբ պատարագի արարողութեան ընթացքին, մեր
Տէրը՝ Յիսուս Քրիստոս, անբեւութաբար կ'իջնէ սուրբ
սեղանին վրայ եւ քահանային աղօթքովը օրհնուած հացն
ու գինին կը փոխակերպէ իր մարմինին եւ արեան:
Սրբագործուած հացն ու գինին իրենց մէջ կ'ընդունին
Փրկչին հոգեւոր ներկայութիւնը:

Սուրբ հաղորդութիւն նաշակողը, իր ներսիդին ըն-
դունած կ'ըլլայ Յիսուս Քրիստոսը: Ուրեմն, որքա՛ն
զգոյշ ըլլալու ենք մեղք գործելէ: Սուրբ հաղորդութեան
մօտենալէ առաջ, պայման է, որ ենթական խոստովանի
իր մեղքերը եւ թողութիւն խնդրէ Աստուծմէ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1) Յիսուսի երկու աշակերտները քաղաք երթալով որո՞ւ
հանդիպեցան:

2) Ընթրիքի ժամանակ, Յիսուս իր մէջքին դեմքակ մը
կապելով ի՞նչ ըրաւ:

3) Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուալով ինչպիսի՞
դաս տուաւ անոնց:

4) Ո՞ր աշակերտը իր վարդապետը մատնեց եւ քանի՞ կտոր արծաթի փոխարէն:

5) Յիսուս թրջուած պատառը Յուդային տալով ի՞նչ ըսաւ:

6) Ընթրիքի պահուն, Յիսուս հացը առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:

7) Յիսուս գինիին բաժակը առնելով ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ:

8) Պետրոս քանի՞ անգամ պիտի ուրանար Յիսուսը:

9) Ընթրիքէն վերջ, Յիսուս իր աշակերտներով ո՞ր գնաց:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ով որ մարմինէս կ'ուտէ եւ արիւնէս կը խմէ՝ յաիտեանական կեանք կ'ունենայ եւ ես անոր յարութիւն պիտի տամ վերջին օրը»: (Յովհ. 2.54):

ԺԸ. Դաս

Յիսուսի Ձերբակալութիւնը (Մատթ. ԻԶ.36-56 Յովհ. ԺԸ.1-16)

Վերջին ընթրիքէն ետք, Յիսուս երբ Գեթսեմանի պարտէզը հասաւ, իր աշակերտներուն ըսաւ.

— Հոս նստեցէք, մինչեւ որ ես երթամ աղօթեմ: Դու ալ աղօթեցէք որ փորձութեան մէջ չիյնաք:

Ապա, իրեն հետ առաւ Պետրոսը, Յովհաննէսը եւ Յակոբոսը ու միւսներէն քիչ մը հեռանալով ըսաւ անոնց.

— Իմ հոգիս մեռնելու աստիճան տրտում է. հոս կեցէք եւ ինծի հետ արթո՛ւն մնացէք:

Յիսուս, անոնցմէ առաջ անցաւ ու իր երեսին վրա իյնալով՝ աղօթեց եւ ըսաւ.

— Հա՛յր իմ, եթէ կարելի է, այս բաժակը հեռացու ինձմէ, բայց ոչ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ ինչպէ որ դո՛ւն կ'ուզես:

Յիսուս, իր երեք աշակերտներուն մօտ վերադառնալով՝ զանոնք քունի մէջ գտաւ եւ ըսաւ Պետրոսի.

— Չկրցա՞ք ժամ մը արթուն մնալ ինծի հետ: Արթու մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք: Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար է:

Երկրորդ անգամ, Յիսուս նորէն գնաց եւ աղօթեց ըսե՛լով.

— Հա՛յր իմ, եթէ կարելի է՝ այս բաժակը թող հեռանայ ինձմէ, ապա թէ ոչ՝ պիտի խմեմ զայն, քու կամք թող ըլլայ:

Յիսուս, նորէն վերադառնալով իր աշակերտները քունի մէջ գտաւ: Թողուց զանոնք ու դարձեալ աղօթեց:

նոյն խօսքերը կրկնելով: Այդ միջոցին հրեշտակ մը
երեւցաւ իրեն եւ սկսաւ քաջալերել ու զօրացնել: Յիսուս
նեղութեան ու տագնապի մէջ ըլլալով՝ ջերմեռանդու-
թեամբ կ'աղօթէր եւ քրտինքը արիւնի մեծ կաթիլներու
նման ոլորնածեւ գետին կը հոսէր:

Իր աղօթքը վերջացնելէ ետք, Յիսուս եկաւ իր աշա-
կերտներուն քով եւ ըսաւ անոնց.

— Ասկէ ետք քնացէք ու հանգստացէք, որովհետեւ
ահա հասած է ժամը եւ Մարդու Որդին մեղաւորներուն
ձեռքը պիտի մատնուի...

Մինչ Յիսուս կը խօսէր, Յուդա ամբոխի մը գլուխն
անցած, մօտեցաւ իրեն ու համբուրելով ըսաւ.

— Ողջոյն քեզ, Վարդապետ:

— Յուդա, համբուրելով կը մատնես զիս, ըսաւ Յի-
սուս անոր, եւ ապա իր վրայ եկող խուժանին դառնալով
հարցուց.

— Ո՞վ կը փնտռէք:

— Նազովրեցի Յիսուսը կը փնտռենք, ըսին անոնք:

— Ես եմ, ըսաւ Յիսուս:

Ձինք ձերբակալելու եկողները «ես եմ» բառերը լսե-
լով՝ ետ ետ գացին ու գետին ինկան: Յիսուս նորէն
հարցուց անոնց.

— Ո՞վ կը փնտռէք:

— Նազովրեցի Յիսուսը, ըսին անոնք դարձեալ:

— Ձեզի ըսի թէ ես եմ, կրկնեց Յիսուս:

Այս խօսքին վրայ, անոնք մօտենալով ձերբակալեցին
Յիսուսը: Պետրոս չկրցաւ տոկալ այդ տեսարանին եւ
անմիջապէս իր սուրը քաշեց ու քահանայապետի ծա-
ռային՝ Մաղքոսի աջ ականջը կտրեց: Յիսուս ըսաւ
Պետրոսի.

— Սուրդ իր պատեանը դիր, վասնզի ամէն սուր
առնողները սուրով պիտի իյնան: Կը կարծես թէ չե՞մ

կրնար հիմա իմ Հօրս աղաչել, որ այստեղ ինծի հասց
տասներկու գունդէն աւելի հրեշտակներ:

Ապա, Յիսուս իր ձեռքը երկնցնելով Մաղքոսի ակա
ջին դպաւ ու զայն բժշկեց: Իսկ զինք ձերբակալել
համար եկող փարիսեցիներուն ու քահանայապետներո
ըսաւ.

— Աւագա՞կ եմ, որ այդպէս սուրերով ու բիրեր
վրաս կը յարձակիք՝ զիս ձերբակալելու համար: Ամ
օր ձեզի հետ տաճարին մէջ, կը նստէի ու կը սորվեցնէ
եւ չձերբակալեցիք զիս:

Անոնք պաշարեցին Յիսուսը ու տարին նախ՝ Անն
քահանայապետին քով. իսկ անկէ ետք՝ Կայիափա քս
հանայապետին ապարանքը: Յիսուսի աշակերտներ
իրենց վախէն ցրուեցան ու փախան: Միայն Պետրոս է
Յովհաննէս հետեւեցան ամբոխին ու կերպով մը կրցա
մտնել քահանայապետի ապարանքէն ներս:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Գեթսեմանիի պարտեզին մէջ Յիսուսի ըրած աղօթք
մեզի համար գեղեցիկ օրինակ մըն է, որպէսզի անդա
դար Աստուծոյ աղօթեմք, անոր գօրութիւնն ու օգնու
թիւնը խնդրեմք սատանայի եւ մեղքի դէմ պայքարելու
համար:

Աղօթքով կը ստանանք մեղքերու թողութիւն եւ փրկ
կութիւն:

Աղօթքով կը ստանանք Աստուծմէ գօրութիւն:

Աղօթքով կը ստանանք Սուրբ Հոգւոյն շնորհները:

Աղօթքով կը ստանանք Աստուծոյ ողորմութիւնն ու
օգնականութիւնը:

Աղօթքով կրնանք տոկալ անդութիւններու եւ համբե-
րել:

Աղօթ-ժող կը ստանանք Սուրբ Հոգւոյն մխիթարութիւնը, սուգի, տրամուրեան, ցաւի եւ դժբախտութիւններու միջոցին:

Աղօթ-ժող կը գտնենք ապահովութիւն:

Աղօթ-ժող կը գտնենք յաջողութիւն՝ բարի գործերու մէջ:

Աղօթ-ժող կը քննենք հասկնալ Աստուծոյ խօսքը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1) Յիսուս, Գեթսեմանիի պարտէզը երթալով ի՞նչ ըսաւ իր աշակերտներուն եւ ի՞նչ ըրաւ:

2) Յիսուս ի՞նչ ըսելով կ'աղօթէր:

3) Աղօթքէ վերադարձին, Յիսուս իր աշակերտները ի՞նչ վիճակի մէջ գտաւ եւ ի՞նչ ըսաւ անոնց:

4) Աղօթքի պահուն ո՞վ երեւցաւ Յիսուսի եւ ինչ ըրաւ:

5) Յուդա Իսկարիովտացին Յիսուսի մօտենալով ի՞նչ ըսաւ եւ ի՞նչ ըրաւ:

6) Յիսուս ի՞նչ ըսաւ Յուդայի:

7) Պետրոս Յիսուսի ձերբակալութիւնը տեսնելով ի՞նչ ըրաւ:

8) Յիսուս ի՞նչ ըսաւ Պետրոսի եւ ապա ի՞նչ ըրաւ:

9) Հրեաներ Յիսուսը ձերբակալելով ո՞ր տարին:

10) Ո՞ր աշակերտները քահանայապետի ապարանքէն ներս կրցան մտնել:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Արթուն մնացէք եւ աղօթեցէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք» (Մատթ. ԻԶ.41):

ԺԹ. Դաս

Յիսուսի Դատաւարութիւնը հրեաներու Ատեան

Առջեւ եւ Պետրոսի Ուրացութիւնը

(Մատթ. ԻԶ.57-75, ԻԷ.1-10, Յովհ. ԺԸ.12-27)

Կայիափա քահանայապետը հրեաներու մեծ ժողովի խառնակներով ու քահանաներով շրջապատուած, գիշեր սկսաւ հարցաքննել Յիսուսը: Ատեանի մէջ նստողն էր փնտռելին ծանր մեղադրանքներ՝ Յիսուսը մահու դատապարտելու համար: Սակայն չկրցան որեւէ յարցանք կամ մեղք գտնել Անոր վրայ: Մի քանի սովկաներ եկան եւ զանազան զրպարտութիւններ ըրին թայց անոնցմէ ոեւէ մէկը չկրցաւ իր ըսածը փաստել: Քահանայապետը հարցուփորձեց Յիսուսը՝ իր ուսուցումներուն մասին: Յիսուս պատասխանեց.

— Ես յայտնապէս խօսեցայ աշխարհի. ես միշտ ժողովարաններու եւ տաճարին մէջ սորվեցուցի ու ծածկարբան մը չխօսեցայ: Ինչո՞ւ ինձի կը հարցնես, հարցոնոնց, որոնք լսեցին թէ ինչ խօսեցայ իրենց:

Այս պատասխանին վրայ, քահանայապետի սպասուորներէն մէկը ապտակ մը զարկաւ Յիսուսին եւ ըսաւ.

— Այդպէ՞ս կը պատասխանես քահանայապետին:

— Եթէ չար խօսեցայ, վկայէ չարին համար. իսկ եթէ բարի խօսեցայ, ինչո՞ւ համար կը զարնես, ըսաւ Յիսուս սպասուորին:

Քահանայապետը կը ջանար անպայման յանցանք բռնողնել Յիսուսին ու չէր կրնար. ուստի ոտքի ելլելու հարցուց Անոր.

— Դո՞ւն ես Բրիստոսը, օրհնեալ Աստուծոյ Որդին

— Այո, ես եմ. ասկէ ետք պիտի տեսնէք Մարդու Որդին՝ ամենազօր Աստուծոյ աջ կողմը նստած եւ պիտի տեսնէք որ կու գայ երկինքի ամպերուն մէջէն:

Քահանայապետը, Յիսուսի արտասանած խօսքերը առանց քննութեան ենթարկելու, Աստուծոյ անուան դէմ անարգանք նկատեց ու իր հանդերձները պատռելով ըսաւ.

— Հայհոյութիւն ըրաւ. ալ ի՞նչ պէտք ունինք վկաներու, ահա հիմա լսեցինք ըրած հայհոյութիւնը: Ի՞նչ կը մտածէք:

— Մահապարտ է, ըսին բոլոր ներկաները:

Այն ատեն, ոմանք սկսան Յիսուսի երեսին թքնել, գլուխը լաթով ծածկել եւ բռունցքով ծեծել ու հարցնել, «Մարգարէացի՛ր, դուն Քրիստոս, ո՞վ քեզի գարկաւ»:

Մինչ՝ Յիսուս կը հարցաքննուէր քահանայապետին ու ժողովականներուն կողմէ, անդին Պետրոս խումբ մը մարդոց հետ նստած էր դուրսը՝ գաւիթին մէջ՝ կրակին քով կը տաքնար եւ կը մտածէր այդ օրուան անցուդարձերուն մասին, ու սրտատրոփ կը սպասէր, թէ արդեօք Յիսուսի հարցաքննութիւնը ինչ ելք պիտի ունենար: Յանկարծ, քահանայապետի աղախիններէն մէկը Պետրոսի նայելով ըսաւ.

— Դուն ալ Յիսուս նազովրեցիի հետն էիր:

Պետրոս աղախինին արտայայտութեան առջեւ վախցաւ, որ իր ինքնութիւնը պիտի յայտնուէր ամենուն, ուստի ուրացաւ եւ ըսաւ.

— Չեմ ճանչնար զԱյն եւ չեմ գիտեր թէ դուն ինչ կը խօսիս:

Պետրոս, երբ գաւիթէն դուրս կ'ելլէր, դրան առջեւ ուրիշ կին մը տեսաւ զինք եւ հոն եղողներուն ըսաւ, Պետրոսը ցոյց տալով.

— Ասիկա ալ Յիսուս նազովրեցիի հետն էր:

Պետրոս նորէն ուրացաւ եւ երդում ընելով ըսաւ.

— Ես այդ մարդը չեմ ճանչնար:

Ժամանակ մը ետք, Պետրոսին քովը եղողները ը իրեն.

— Արդարեւ դուն ալ անոնցմէ (Յիսուսի հետեւն երէն) ես, որովհետեւ Գալիլիացի ես եւ քու խօսուաւ ալ անոնց նման է:

Իսկ քահանայապետի ծառաներէն մէկն ալ գարսաւ.

— Չէ՞ որ ես քեզ Անոր (Յիսուսի) հետ պարտէ մէջ տեսայ:

Պետրոս դարձեալ ուրացաւ իր Տէրը եւ սկսաւ անի ու երդում ընել թէ ինք չէր ճանչնար Յիսուսը: ' խօսքը Պետրոսի բերանն էր, երբ նոյն պահուն աքաղականչեց: Այդ միջոցին Յիսուս դարձաւ ու ակնարկ նետեց Պետրոսին, որ իսկոյն անդրադարձաւ իր տրութեան ու սխալին եւ միտքը բերաւ Յիսուսի խօսոր իրեն ըսեր էր, թէ տակաւին աքաղաղը չկանչած՝, երեք անգամ պիտի ուրանար իր Տէրը: Պետրոս, զգա իր ահաւոր մեղքը, զղջաց ու դուրս ելլելով դառնալացաւ՝ Աստուծմէ թողութիւն խնդրելով:

Երբ առտու եղաւ, հրեաներու քահանայապետներն իշխանները իրարու հետ խորհրդակցեցան եւ վճռեց սպաննել Յիսուսը: Սակայն մահուան վճիռը մի կուսակալը՝ Պոնտացի Պիղատոսը կրնար գործադրաւ. ուստի, որոշեցին անոր քով տանիլ Յիսուսը զԱյն ներկայացնել որպէս խռովարար եւ պահանանոր խաչելութիւնը:

Յուդա իսկարիոփտացի, երբ տեսաւ թէ Յիսուս մուան դատապարտուեցաւ, զղջաց իր ըրածին վրայ ստացած երեսուն արծաթը ետ դարձուց հրեայ քահանայապետներուն եւ ըսաւ.

— Մեղք գործեցի արդար մէկը մատնելուս համալ

— Մեր հոգը չէ, այդ քու գիտնալիքդ է, ըսին անոն

Յուդա, երեսուն արծաթը տաճարին մէջ ձգեց դուրս ելլելով՝ ինքզինք կախեց:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1) Յիսուս, Աստուծոյ Որդին էր եւ աշխարհ դրկուած էր մարդոց փրկութեան համար: Անոր հրաշքները աստուածային զօրութեամբ կատարուած էին: Հրեաներ չանսացին Յիսուսի եւ չընդունեցին անոր երկնային առաքելութիւնը, որովհետեւ իրենք չար էին եւ չէին ուզեր ձերբազատուիլ իրենց մոլութիւններէն: Անոնք բռնեցին Յիսուսը եւ մահուան դատապարտեցին, կարծելով թէ պիտի կրնան աշխարհէ վերցնել Յիսուսի խօսքերն ու սորվեցուցած նոր պատուիրանները:

2) Յիսուս կրնար ինքզինք ազատել եւ իր թշնամիները անշարժութեան մատնել, բայց չըրաւ, քանի որ, ինք աշխարհ եկած էր մարդոց փրկութեան համար չարչարուելու եւ իր սուրբ արիւնը թափելու:

3) Պետրոս՝ Յիսուսը ուրանալով մեծ մեղք մը գործեց, սակայն իր սխալին վրայ անդրադառնալով գղջաց ու ապաշխարելով թողութիւն խնդրեց եւ ներում ստացաւ:

4) Յուդա անդրադարձաւ իր կատարած ահաւոր մեղքին վրայ, գղջաց եւ քահանայապետներուն առջեւ խոստովանեցաւ, թէ արդար մէկը մատնած էր. սակայն չխոնարհեցաւ Աստուծոյ առջեւ եւ Պետրոսի նման ներում չխնդրեց Աստուծմէ: Ան ինքզինք ծառէն կախելով՝ անձնասպան եղաւ ու դատապարտուեցաւ դժոխքի անշէջ կրակին: Եթէ Յուդան կտրած սրտով Աստուծմէ ներում խնդրէր իր մեղքին համար, Յիսուս պատրաստ էր անոր ահաւոր մեղքն ալ քանդելու եւ ներելու:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1) Ո՞վ սկսաւ հարցաքննել Յիսուսը:

2) Յիսուս ինչ պատասխանեց զինք ապտակող ծառայի
3) Քահանայապետն ու իր հետեւորդները կրցա՞ն որեւ յանցանք մը գտնել Յիսուսի վրան:

4) Կաշիափա քահանայապետը վերջին անգամ ի՞նչ հարցոց Յիսուսին:

5) Յիսուս ի՞նչ պատասխանեց:

6) Քահանայապետը իր հանդերձները պատռելով ի՞նչ ըսաւ ժողովականներուն:

7) Պետրոս քանի՞ անգամ ուրացաւ իր Տէրը:

8) Պետրոս իր սխալին ու մեղքին վրայ անդրադառնալով ի՞նչ ըրաւ:

9) Հրեաներու ատեանը ի՞նչ վճիռ արձակեց Յիսուս համար:

10) Յուդա իր ըրածին վրայ գղջալով ի՞նչ ըրաւ:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Ասկէ յետոյ Մարդու Որդին պիտի նստի Ամենագօր Աստուծոյ աջ կողմը» (Ղուկ. ԻԲ.69):

Յիսուսի Չարչարանքները, Խաչելութիւնն ու
Թաղումը
(Մատթ. ԻԷ. 11-66)

Ուրբաթ առտու, հրեայ քահանայապետներն ու մեծա-
ւորները մեծ բազմութեան մը գլուխն անցնելով, Յի-
սուսը կապեցին ու տարին Պիղատոսին առջեւ եւ սկսան
ամբաստանել ու ըսել.

— Այս մարդը գտանք, որ մեր ազգը կը մոլորեցնէ
ու կայսեր հարկ տալէ կ'արգիլէ, եւ ինք իրեն համար
կ'ըսէ թէ Քրիստոս ու թագաւոր է:

Պիղատոս առաջին առիթով իսկ հասկցաւ, թէ Յիսուս
մոլորեցուցիչ մը չէր եւ ոչ ալ ժողովուրդը կ'արգիլէր
կայսեր հարկ տալէ: Սակայն, ուզեց հասկնալ թէ Յիսուս
իրապէ՞ս Քրիստոս եւ թագաւոր էր. ուստի հարցուց.

— Դո՞ւն ես հրեաներուն թագաւորը:

— Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ, ըսաւ
Յիսուս, — եթէ իմ թագաւորութիւնս այս աշխարհէն ըլ-
լար, իմ սպասաւորներս կը կռուէին, որպէսզի հրեանե-
րուն ձեռքը չմատնուէի:

Պիղատոս՝ Յիսուսի անմեղութիւնը ստուգելով, խու-
սափեցաւ անոր համար մահուան վճիռ արձակելէ. բայց
նոյն ատեն ալ չուզեց գէշ ըլլալ հրեայ մեծաւորներուն
հետ եւ ըսաւ անոնց.

— Դուք այս մարդը իմ առջեւ բերիք իբրեւ ժողո-
վուրդի մոլորեցուցիչ, սակայն ես անոր վրայ ձեր ըսած
յանցանքներէն որեւէ մէկը չգտայ: Հետեւաբար մահ-
ուան արժանի բան մը չէ ըրած:

Հրեաներ ընդդիմացան Պիղատոսին եւ պնդեցին,
Յիսուս անպայման դապատարտուէր մահուան:

Ամէն տարի Չատկի տօնին առիթով, սովորութիւն
որ կուսակալը մահապարտ մը արձակէր: Կուսակալ
մահապարտներուն անունները կը ներկայացնէր հրե-
աներուն եւ անոնք իրենց նախասիրած անձին ազատ
թիւնը կը պահանջէին: Պիղատոս ուզեց այս առիթ
օգտուիլ եւ Յիսուսը ազատ արձակել, ուստի ներկ-
յացուց երկու անուններ եւ ըսաւ.

— Այս երկուքէն ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակե-
Բարաբրա՞ն թէ Յիսուսը:

Պիղատոս կը յուսար, որ ժողովուրդը պիտի նախըն-
րէր Յիսուսի ազատ արձակումը, քանի որ Բարաբրա
աւազակ մըն էր եւ նախապէս պատճառ դարձած էր մ.
խռովութեան մը, ու ամէն մարդ կը սպասէր ան.
մահուան վճիռի գործադրութեան:

Հրեայ քահանայապետներն ու իշխանները Պիղատո-
սի տաւորութիւնը հասկնալով, ժողովուրդը գրգռեցին
համոզեցին, որ Բարաբրայի ազատ արձակումը խնդրե՛-
ու բազմութիւնը սկսաւ աղաղակել որ Բարաբրան ալ
ձակուի:

— Հապա ի՞նչ ընեմ Յիսուսը որ Քրիստոս կ'ըսու-
հարցուց Պիղատոս:

— Խաչը հանէ ատիկա, սկսան աղաղակել հրեաները

Պիղատոս, տեսնելով որ օգուտ չունին իր ջանքեր
եւ աւելի խռովութիւն կրնայ ծագիլ, ջուր առաւ եւ ժ-
ղովուրդին առջեւ իր ձեռքերը լուալով ըսաւ.

— Ես այդ արդարին արիւնէն անպարտ եմ, դու
գիտէք:

— Ատոր արիւնը մեր ու մեր որդիներուն վրայ ըլլա-
յսին հրեաները:

Այն ատեն Պիղատոս, հրեաները գոհ ձգելու համար
Բարաբրան ազատ արձակեց ու Յիսուսը յանձնեց զին
ուորներուն, եւ անոնք զԱնիկա պալատին գաւիթը տա

րին, վրան կարմիր քղամիդ (պատմուճան) ձգեցին ու փուշէ պսակ մը հիւսելով՝ գլխուն վրայ դրին եւ աջ ձեռքին ալ եղէգ մը տուին. ապա սկսան ծնրադրել Անոր առջեւ ու ծաղրելով ըսել. «Ողջոյն քեզ, թագաւոր հրէից»: Նաեւ վրան թքնելով ձեռքէն եղէգը կ'առնէին ու գլխուն կը զարնէին:

Այս բոլորէն ետք, Պիղատոս դարձեալ ուզեց Յիսուսը ազատ արձակել եւ իր փափաքը յայտնեց հրեաներուն. սակայն անոնք պոռացին.

— Եթէ ատիկա ազատ արձակես, կայսեր բարեկամ չես: Ամէն ով որ ինքզինք թագաւոր կը կոչէ, կայսեր բարեկամ չէ:

Ի վերջոյ, Պիղատոս տեղի տուաւ եւ վճռեց որ Յիսուս խաչուի:

Հրեաներ՝ հռովմայեցի զինուորներու հսկողութեամբ, Յիսուսը տարին Երուսաղէմի պարիսպէն դուրս՝ Գողգոթա բլուրը: Ան ուսին վրայ կրեց իր ծանր խաչը եւ ենթարկուեցաւ անտանելի չարչարանքներու: Հոն խաչը հանեցին Յիսուսը: Իրեն հետ խաչեցին նաեւ երկու աւագակներ, մէկը իր աջ կողմը, իսկ միւսը՝ ձախ կողմը:

Յիսուս՝ իր ցաւերուն եւ չարչարանքներուն մէջ զինք խաչողներուն համար աղօթեց ըսելով, «Հայր, ներէ ստոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»:

Մինչ Յիսուսի գամուած ձեռքերէն ու ոտքերէն արիւնը կը հոսէր, իր դիմացը կեցող քահանայապետներն ու դպիրները անգթօրէն կը ծաղրէին զինք ու կ'ըսէին, «Ուրիշները ազատեց, սակայն ինքզինք չի կրնար ազատել... Թող հիմա խաչէն վար իջնէ, որպէսզի հաւատանք իրեն»:

Յիսուսի քով խաչուած աւագակներէն մէկը սկսաւ հայհոյել եւ ըսել.

— Եթէ դուն Քրիստոսն ես, ազատէ ինքզինքդ եւ մեզ ալ:

Բայց միւս աւագակը իր ընկերը յանդիմանելով՝ ըսաւ. — Դուն Աստուծոյն չե՞ս վախնար... Մենք այս դատապարտութեան արժանի էինք, բայց Ասիկա գէշ բան չէ ըրած:

Իր այս խօսքէն ետք՝ Յիսուսի դառնալով աղաչական ձայնով ըսաւ.

— Տէր յիշէ զիս, երբ քու թագաւորութիւնովդ գաս:

— Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, դուն այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս, ըսաւ անոր Յիսուս:

Մինչ Յիսուս խաչին վրայ էր, յանկարծ արեգակը խաւարեցաւ եւ երեք ժամ խաւար տիրեց երկրի վրայ, որմէ ետք Յիսուս բարձր ձայնով աղաղակեց, «էլի, էլի, լամա՞ սաբազթանի», որ ըսել է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ զիս թողուցիր:

Հոն գտնուողներէն մէկը սպունգի մէջ քացախ լեցուց ու եղէգի մը ծայրը անցընելով երկարեց Յիսուսի բերնին որպէսզի խմէ:

Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղաղակեց եւ ըսաւ, «Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս», ու հոգին տուաւ: Նոյն միջոցին Երուսաղէմի տաճարին վարագոյրը վերէն վար երկուքի ճեղքուեցաւ ու երկիրը շարժեցաւ եւ քարերը պատառեցան:

Պահակ կեցող հռովմէացի հարիւրապետն ու իրեն հետ եղողները՝ այս բաները տեսնելով շատ վախցան ու ըսին, «Իրապէս որ ասիկա Աստուծոյ Որդին էր»:

Իրիկուան մօտ, զինուորներէն մէկը, Յիսուսի մահը ստուգելու համար՝ իր գեղարդով Յիսուսին կողը խոցեց եւ իսկոյն արիւն ու ջուր ելաւ:

Այս բոլորէն ետք, Յովսէփ Արեմաթացի կոչուած բարի մարդ մը Պիղատոսին ներկայանալով արտօնութիւն առաւ Յիսուսի մարմինը պատուով թաղելու համար: Իրեն միացաւ նաեւ Նիկողեմոս: Անոնք Յիսուսի մարմինը խաչէն վար առնելով, խունկերով փաթթեցին կտաւի մէջ՝ հրեաներու սովորութեան համաձայն:

Յիսուսի խաչուած տեղը պարտէզ մը կար եւ անոր մէջն ալ նոր գերեզման մը, որուն մէջ տակաւին մեռել մը չէր դրուած: Յովսէփ Արեմաթացին եւ Նիկողեմոս, Յիսուսի մարմինը հոն դրին եւ խոշոր քար մը գլորելով գոցեցին անոր դուռը:

Յիսուս յաճախ ըսած էր, թէ ինք մեռնելէ ետք՝ երրորդ օրը յարութիւն պիտի առնէր: Հրեայ քահանայապետները այս խօսքը իմացած ըլլալով, կը կասկածէին անոր աշակերտներէն, որ կրնային գիշերով զալ եւ իրենց Տիրոջ մարմինը գողնալ եւ ետքն ալ յայտարարել անոր յարութիւնը: Ուստի, քահանայապետները նախազգուշութեան համար, գերեզմանին դուռը կնքեցին եւ հոն պահապան զինուորներ դրին, որպէսզի ոեւէ մէկը չհամարձակէր Յիսուսի մարմինը գերեզմանէն վերցնելու:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեր նախածնողաց՝ Ադամի եւ Եւայի յանցանքին պատճառով, մարդկային ցեղը դատապարտուած էր դրախտէն դուրս մնալու: Խաչին վրայ Յիսուսի կատարած գոհաբերութենէն առաջ մարդիկ կենդանիներ կը գոհէին (կը նուիրէին) Աստուծոյ եւ անոնց արիւնը կը սրսկէին, որպէսզի փառութիւն ըլլար իրենց մեղքերուն. սակայն, այդ գոհերը չէին կրնար փառել ու ջնջել Ադամէն փոխանցուած մեղքը: Յիսուս կամաւորապէս յանձն առաւ գոհուիլ ու իր սուրբ արիւնը թափել Հօր Աստուծոյ առջեւ եւ անով փառութիւն ընել մարդկային ցեղի մեղքերուն համար: Հայր Աստուած ընդունեց իր Միածին Որդւոյն գոհաբերութիւնը եւ անոր արեան հեղումով թողութիւն շնորհեց մեղաւոր մարդկութեան: Հայր Աստուած բացաւ փակուած դրախտին դուռը, եւ ով որ հաւատայ Յիսուս Քրիստոսի ու մկրտուի, կը սրբուի ադամական մեղքէ. կը դառնայ Աստուծոյ որդեգիր եւ ժառանգորդ երկինքի արքայութեան:

Արդ, մեր պարտականութիւնն է հաւատալ Աստուծոյ, հաւատալ Յիսուս Քրիստոսի խաչին վրայ կատարած փրկագործութեան խորհուրդին ու կատարել անոր պատուիրանները: Իսկ երբ մեր տկարութեան պատճառով մեղքի մէջ իյնանք, չյուսահատինք, այլ խոնարհինք Անոր առջեւ, խոստովանինք մեր մեղքերը եւ թողութիւն խնդրենք իրմէ, որ պատրաստ է մեզի ներելու՝ ինչպէս որ ներեց խաչեալ աւագակին:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Հրեաներ Յիսուսը Պիղատոսին առջեւ տանելով ի՞նչ ամբաստանութիւն ըրին:
- 2) Պիղատոս ի՞նչ հարցոց Յիսուսին:
- 3) Յիսուս ի՞նչ պատասխանեց Պիղատոսին:
- 4) Պիղատոս Յիսուսը հարցաքննելէ ետք ի՞նչ ըսաւ հրեաներուն:
- 5) Հրեաները ի՞նչ կը պահանջէին Պիղատոսէն որ ընէր:
- 6) Պիղատոս իր ձեռքերը լուալով ի՞նչ ըսաւ հրեաներուն:
- 7) Հրեաները ի՞նչ պատասխանեցին:
- 8) Յիսուսի տեղ ո՞ր մահապարտը ազատ արձակուեցաւ:
- 9) Բարաբբա ինչպիսի՞ մէկն էր:
- 10) Պիղատոսի պալատի գալիքին մէջ զինուորները ի՞նչ ըրին Յիսուսի:
- 11) Ո՞ր բլուրին վրայ խաչեցին Յիսուսը:
- 12) Ուրիշ որո՞նք խաչուեցան Յիսուսի հետ:
- 13) Առաջին աւագակը Յիսուսը նախատելով ի՞նչ ըսաւ:
- 14) Երկրորդ աւագակը ի՞նչ պատասխանեց իր ընկերոջ եւ յետոյ ի՞նչ խնդրեց Յիսուսէն:
- 15) Յիսուս ի՞նչ պատասխանեց անոր:

16) Յիսուս զինք խաչողներուն համար ի՞նչ ըսելով աղօթեց:

17) Յիսուս ի՞նչ ըսելով աւանդեց իր հոգին:

18) Երբ Յիսուս հոգին աւանդեց, ի՞նչ բաներ պատահեցան:

19) Ո՞ր թաղեցին Յիսուսի մարմինը:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Անոր Որդոյն Յիսուս Քրիստոսի արինը կը սրբէ մեզ ամէն մեղքէ» (Ա. Յովհ. Ա.7):

ԻԱ. Դաս

Յիսուսի Յարութիւնը

(Մատթ. ԻԸ.1-18: Մարկ. ԺԶ. 1-11: Ղուկ. ԻԴ. 1-12:

Յովհ. Ի.1-18)

Յիսուս իր աշակերտներուն յաճախ ըսած էր, թէ ինչպիսի չարչարուէր, խաչին վրայ իր արիւնը թափէր հոգին աւանդէր եւ գերեզման դրուելէ ետք երրորդ օր յարութիւն առնէր: Աշակերտները թէեւ լսած էին այս խօսքերը, սակայն Յիսուսի մատուցեան, ձերբակալութեան ու խաչելութեան դէպքերը այնքան խոր ազդեցութիւն ձգած էին իրենց վրայ, որ շփոթած վիճակ մը ունէին: Անոնք, հրեաներու վախէն հաւաքուած էին ընթրիքի վերնատունը եւ կը սգային ու կ'ողբային իրենց սիրելի վարդապետին մահը:

Միաշաբաթի օրը (Կիրակի օր), առաւօտ կանուխ խումբ մը բարեպաշտ կիներ՝ գլխաւորութեամբ Մարիա Մագդաղենացիի՝ ճամբայ ելան դէպի գերեզման: Անոնք, իրենց հետ առած էին խունկ եւ իւղ՝ Յիսուսի մարմինը խնկելու համար:

Սակայն, իւղաբեր կիներու գալուստէն առաջ, Յիսուս յարութիւն առած ու գերեզմանէն ելած էր: Նոյն ատեն Տիրոջ հրեշտակը երկինքէն իջնելով գերեզմանին քարը մէկդի գլորած ու անոր վրայ նստած էր: Պահապա՛ւ կինուորները հրեշտակին լուսափայլ դէմքը տեսնելով իրենց վախէն մեռելի պէս եղած եւ ապա փախած էին՝ դէպի քաղաք:

Երբ կիները գերեզման հասան, տեսան թէ գերեզմանին քարը մէկդի գլորուած էր եւ Յիսուսի մարմինը

չկար: Այդ տեսարանին առջեւ, կիները զարմացան եւ ապշեցան ու կարծեցին թէ Յիսուսի մարմինը վերցուած կամ գողցուած էր ուրիշներու կողմէ:

Մարիամ Մագդաղենացին՝ շուտով գերեզմանէն վերադարձաւ ու քաղաք իջնելով լուր տուաւ Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներուն, թէ Յիսուսի մարմինը գերեզմանին մէջ չէր գտնուեր: Երկու առաքեալները այս լուրը առնելով՝ ճամբայ ելան դէպի գերեզման:

Միւս կիները, շուարած վիճակով տակաւին կը սպասէին հոն, եւ մինչ գերեզմանէն ներս մտած զարմանքով կը նայէին, տեսան լուսափայլ հրեշտակ մը եւ զարհուրեցան: Բայց հրեշտակը ըսաւ իրենց.

— Մի՛ վախնաք, գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք. Անիկա հոս չէ, այլ յարութիւն առաւ: Եկէք եւ տեսէք այն տեղը, ուր ինք պառկած էր:

Կիները հրեշտակին խօսքերէն քաջալերուած, մտան գերեզմանին ներքին մասը՝ ուր դրուած էր Յիսուսի մարմինը, ու զայն պարապ գտնելով ապշեցան: Նոյն միջոցին, լուսափայլ հանդերձներով երկու հրեշտակներ եւս երեւցան իրենց: Կիները վախով երեսնին գետին խոնարհեցուցին: Բայց հրեշտակները ըսին իրենց.

— Ինչո՞ւ համար ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք. Անիկա հոս չէ, այլ յարութիւն առաւ:

Մինչ կիները տակաւին պարապ գերեզմանը կը դիտէին, առաջին անգամ աւետող հրեշտակը դարձեալ խօսեցաւ իրենց եւ ըսաւ.

— Շուտով գացէք, ըսէք անոր աշակերտներուն՝ թէ իրենց Տէրը յարութիւն առած է:

Իւղաբեր կիները վախով եւ նոյն ատեն ուրախութեամբ լեցուած՝ հեռացան գերեզմանէն:

Անոնց մեկնումէն ետք, գերեզման եկան Պետրոս եւ Յովհաննէս ու զայն պարապ գտնելով զարմացան: Իսկ երկու առաքեալներու վերադարձէն ետք, Մարիամ Մագ-

դաղենացին եւ գերեզման եկաւ ու սկսաւ լալ: Մինչ կու լար, դէպի գերեզմանը ծռեցաւ, ներսը դիտելու համար: Յանկարծ տեսաւ երկու հրեշտակներ, որոնք նստեր էին այն տեղը, ուր Յիսուսի մարմինը դրուեր էր՝ մէկը գլխուն կողմը եւ միւսը ոտքին կողմը:

— Ո՛վ կին, ինչո՞ւ կու լաս, հարցուցին հրեշտակները Մարիամ Մագդաղենացիին:

— Կու լամ անոր համար, որ իմ Տիրոջս մարմինը այստեղէն վերցուցեր են եւ չեմ գիտեր թէ ուր դրեր են զայն, պատասխանեց Մարիամ եւ ետին դառնալով տեսաւ Յիսուսը որ կեցած էր:

— Ո՛վ կին, ինչո՞ւ կու լաս, զո՞վ կը փնտռես, հարցուց Յիսուս անոր:

Մարիամ չճանչցաւ Յիսուսը եւ կարծելով թէ իրեն հետ խօսողը պարտիզպանն է, ըսաւ անոր.

— Տէր, եթէ դուն վերցուցիր զանիկա, ըսէ ինձի, ո՞ւր դրիր:

— Մարիամ... ըսաւ Յիսուս:

Մագդաղենացին իսկոյն ճանչցաւ Յիսուսի ձայնը եւ րարբռնի (վարդապետ) ըսելով ուզեց մօտենալ Անոր:

— Ինձի մի՛ մօտենար, որովհետեւ դեռ Հօրս քով ելած չեմ... ըսաւ Յիսուս եւ աներեւութացաւ:

Յիսուսի աներեւութանալէն ետք, Մարիամ, ուրախութեամբ, արագ քայլերով հեռացաւ գերեզմանէն եւ հասաւ միւս իւղաբեր կիներուն, որոնք դէպի քաղաք կը յառաջանային: Մինչ միասին կը քալէին, Յիսուս իրենց դիմացը ելաւ եւ ըսաւ, «Ողջոյն ձեզ»: Կիները իսկոյն ճանչցան Յիսուսը եւ անոր ոտքերուն փարեցան ու երկրպագութիւն ըրին: Յիսուս ըսաւ անոնց.

— Մի վախնաք. գացէք ըսէք իմ եղբայրներու (աշակերտներու), որ Գալիլիա երթան եւ հոն պիտի տեսնեն զիս:

Իւղարեր կրները ուրախացան եւ քաղաք իջնելով գացին Յիսուսի տասնըմէկ աշակերտներուն քով եւ պատմեցին անոնց հրեշտակներու տեսիլքն ու Յիսուսի երեւումը:

Յիսուսի գերեզմանին պահապան զինուորներէն ումանք քաղաք գացին եւ հրեայ քահանայապետներուն պատմեցին լուսափայլ հրեշտակին երեւումը, գերեզմանի քարին մէկդի գլորուիլն ու իրենց սարսափահար փախուստը: Քահանայապետները այս բաները լսելով պահ մը շուարեցան, սակայն յետոյ, իրարու հետ խորհրդակցելով, պահապան զինուորները կանչեցին եւ անոնց շատ դրամ տալով ըսին.

— Դուք ուրիշներուն ըսէք, թէ Յիսուսի աշակերտները գիշերով եկան եւ իրենց վարդապետին մարմինը գողցան՝ երբ դուք քունի մէջ էիք: Իսկ եթէ դատաւորը (Պիղատոս) ձեր ըսածը իմանայ, մի վախճաք, մենք զանիկա կը գոհացնենք. անհոգ եղէք:

Ձինուորները, քահանայապետներէն առին դրամները եւ անոնց պատուիրածին պէս տարածայնեցին հրեաներուն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուսի յարութեան եւ հրեշտակի երեւումին մասին պահապան զինուորներուն վկայութիւնը՝ զգաստութեան կոչ մըն էր հրեայ քահանայապետներուն, որ անդրադառնալին թէ Յիսուս Աստուծոյ Որդին, Քրիստոսն էր, որ աշխարհ եկած էր փրկելու մեղաւոր մարդկութիւնը, եւ սակայն, իրենք զինք չէին ճանչցած ու խաչ հանած էին: Բայց անոնք կամակորութեամբ ճշմարտութեան դէմ կեցան եւ իրականութիւնը ժողովուրդէն ծածկելու համար՝ կաշառեցին զինուորները, որ սուտ լուր տարածեն:

Ինչպէս որ, Յիսուս մեռնելէ ետք յարութիւն առնոյնպէս այ անոր երկրորդ գալստեան ատեն, բոլոր մեռնելները յարութիւն պիտի առնեն: Անոնք՝ որոնք Քրիստոսի հաւատալով արդարութեամբ ապրած են, պիտի ժառանգեն երկինքի արքայութիւնը եւ յաւիտեան եջանիկ պիտի ըլլան: Իսկ անոնք, որ չարութեան մեղքի հետեւած են, պիտի տանջուին դժոխքի անշք կրակին մէջ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

- 1) Միաշարքաթի առաւօտուն որո՞նք գերեզման գացին:
- 2) Կիները ինչո՞ւ համար գերեզման կ'երթային:
- 3) Գերեզմանին պահապան զինուորները ինչո՞ւ համար քաղաք փախած էին:
- 4) Ո՞վ գորած էր գերեզմանին քարը:
- 5) Հրեշտակը կիներուն երեւնալով ի՞նչ ըսաւ:
- 6) Մարիամ Մագդաղենացին ինչո՞ւ համար կու ը գերեզմանին քով:
- 7) Յիսուս Մարիամին երեւնալով ի՞նչ հարցուց:
- 8) Մարիամ Յիսուսը ճանչնալով ի՞նչ ըսաւ:
- 9) Իւղարեր կիները վերադառնալու ատեն զո՞վ տեսան ի՞նչ ըրին:
- 10) Յիսուս ի՞նչ ըսաւ կիներուն:
- 11) Իւղարեր կիները որո՞նք քով գացին եւ անոնց ի՞նչ պատմեցին:

ԳՈՑ ՍՈՐՎՈՒ

Քրիստոս յարեալ ի մեռելոց: Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Յիսուսի Երեսույնը Աշակերտներուն

(Ղուկ. ԻԴ.13-49: Յովհ. Ի.19-29)

Յիսուսի տասնըմէկ աշակերտներն ու այլ հետեւորդները, թէեւ իւղաբեր կիներէն լսեցին իրենց Տիրոջ յարութեան աւետիսը, սակայն, չկրցան մէկ անգամէն հաւատալ, թէ խաչին վրայ մեռնող իրենց վարդապետը իրապէս յարութիւն առած էր: Անոնք տակաւին տարակոյսի եւ զարմացումի մէջ էին եւ կը կարծէին թէ գերեզման գացող կիները երեւակայական երեւոյթի մը առջեւ գտնուած են եւ Յիսուս իրապէս չէ երեւցած անոնց:

Նոյն օրը, Յիսուսի հետեւորդներէն երկու հոգի, Եմմաւուս երթալու ատեն իրարու հետ կը խօսէին ու կը վիճէին Յիսուսի խաչելութեան եւ չարչարանքներուն մասին:

Յիսուս՝ ճամբուն վրայ անոնց երեւցաւ ու մօտենալով սկսաւ միասին քալել: Բայց անոնց աչքերը բռնուած էին ու զինք չճանչնան:

— Ի՞նչ բանի մասին կը վիճիք եւ ինչո՞ւ համար տրտմած էք, հարցուց Յիսուս անոնց:

— Երուսաղէմի մէջ միայն դո՞ւն մնացեր ես, որ չես գիտեր, թէ ինչեր պատահեցան հոն այս օրերուն, ըսաւ անոնցմէ մէկը, որուն անունը Կղէովպաս էր:

— Ի՞նչ է պատահեր, հարցուց Յիսուս: Անոնք ալ ըսին.

— Յիսուս Նազովրեցին՝ իր խօսքերովն ու գործերովը մեծ մարգարէ մըն էր. սակայն մեր քահանայապետ-

ներն ու իշխանները զինք մահուան դատապարտելով լսեցին: Մենք կը յուսայինք, թէ ինք պիտի փրկէր Իսրայէլը: Բայց ասով հանդերձ, այս երրորդ օրն է, որ աբաները պատահեցան: Նաեւ մեր մէջէն մի քանի կիներ ալ մեզ զարմացուցին, որոնք առտուն գերեզման երթալով, անոր մարմինը հոն չեն գտած. եւ ըսին, թէ հրեշտակներ երեւցած են իրենց ու ըսեր են թէ Յիսուս ողջ է:

Յիսուս՝ յանդիմանական շեշտով անոնց հասկցուց, ի տակաւին անտեղեակ են Սուրբ Գրոց մարգարէակա գիրքերու պարունակութեան: Բացատրեց, թէ այդ գիրքերուն մէջ գրուած էր, թէ Քրիստոս մահուան պիտի դատապարտուէր, չարչարուէր, իր արիւնը թափէր մեռնէր, եւ ապա յարութիւն առնելով՝ իր փառքը մտնէր:

Այսպէս խօսելով, երեկոյեան մօտեցան Եմմաւուս գիւղին: Յիսուս այնպէս ձեւացուց, թէ ինք աւելի հեռու տեղ մը պիտի երթար: Բայց անոնք ստիպեցին զինք իրենց մօտ անցընել գիշերը: Յիսուս, անոնց հետ գլխաւորապէս ու երբ սեղան նստաւ, հացը առաւ, օրհնեց եւ կտրելով անոնց տուաւ. այն ատեն անոնց աչքերը բացուեցան ու ճանչցան իրենց վարդապետը, սակայն Աններեւութեամբ իրենցմէ:

Կղէովպաս եւ իր ընկերը ապչեցան... Ապա ոտքի ելլելով ետ Երուսաղէմ դարձան ու գացին վերնատունը ուր հաւաքուած էին աշակերտներն ու անոնց ընկերները, որոնք կը խօսէին Յիսուսի յարութեան եւ երեւումներուն մասին: Նոյն օրը, Յիսուս երեւցած էր նաեւ Սիմոն Պետրոսին երբ անիկա դարձեալ գերեզման գացած էր:

Երբ Կղէովպասն ու իր ընկերը ներս մտան, հոն գլխաւորները իրենց ըսին.

— Տէրը իրաւցնէ յարութիւն առաւ եւ երեւցաւ Սիմոնի:

Եմմաւուսէ դարձողներն ալ պատմեցին ներկաներուն թէ Յիսուս ինչպէ՞ս ճամբուն վրայ իրենց հետ քալա-

ու խօսած էր եւ հացը օրհնելու ատեն միայն՝ ինքզինքը ճանչցուցած:

Մինչ անոնք կը խօսէին եւ հրեաներու վախէն վերնատան դռներն ալ գոցած էին, յանկարծ Յիսուս գոց վերնատան մէջ երեւցաւ ու կեցաւ իրենց մէջտեղը ըսելով, «Ողորդութիւն ձեզի, ես եմ, մի վախնաք»: Բայց աշակերտները զարհուրած կը վախնային ու կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն:

— Ինչո՞ւ համար խռոված էք, եւ ինչո՞ւ համար այգպիսի խորհուրդներ կ'ունենաք ձեր սրտերուն մէջ: Տեսէք իմ ձեռքերս ու ոտքերս: Ես ինքս եմ: Շօշափեցէք զիս եւ տեսէք: Ոգին մարմին եւ ոսկորներ չունենար, ինչպէս կը տեսնէք որ ես ունիմ:

Այս ըսելով, անոնց ցոյց տուաւ իր ծակուած ձեռքերն ու ոտքերը, եւ ապա անոնց կասկածը փարատելու համար՝ ուտելիք ուզեց: Աշակերտները իրեն բերին խորոված ձուկ եւ մեղրի խորիսի: Յիսուս բոլորին առջև կերաւ եւ մնացորդը անոնց տուաւ: Ապա բացատրեց թէ ինք պէտք էր չարչարուէր, խաչուէր, թաղուէր եւ երրորդ օրը յարուցուէր առնէր, որպէսզի կատարուէին իր մասին գրուած բոլոր մարգարէութիւնները:

— Ողորդութիւն ձեզի, ինչպէս Հայրը զիս ղրկեց, ես ալ ձեզ կը ղրկեմ, ըսաւ Յիսուս եւ իր աշակերտներուն վրայ փչելով յարեց.— Առէք Սուրբ Հոգին. որոնց որ մեղքերը ներէք՝ ներուած ըլլան անոնց, եւ որոնց որ կապէք՝ կապեալ մնան:

Աշակերտներու մէջէն Թովմաս ներկայ չէր Յիսուսի երեւցած ատենը: Յիսուսի աներեւութանալէն ետք, երբ ինք հոն եկաւ, ներկաները իրեն պատմեցին Յիսուսի երեւումն ու ըսած խօսքերը: Թովմաս ըսաւ անոնց.

— Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը եւ ձեռքս չդպցնեմ անոր կողին՝ չեմ հաւատար:

Ութ օր ետք, Յիսուս նորէն երեւցաւ իր աշակերտներուն՝ երբ անոնք դարձեալ ներսն էին եւ դռները գոցս Այս անգամ Թովմաս ներկայ էր:

— Ողորդութիւն ձեզի, ըսաւ Յիսուս եւ ապա Թովմասին ըսաւ, բե՛ր մատդ եւ դի՛ր այստեղ ու տե՛ս ձեռքեր Սօտեցուր ձեռքդ ու դպցուր կողիս եւ անհաւատ ըլլար, այլ՝ հաւատացեալ:

Թովմաս պատասխանեց.

— Իմ Տէրս եւ իմ Աստուածս:

Յիսուս ըսաւ անոր.

— Դուն զիս տեսար եւ հաւատացիր. երանի անոն որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յիսուսի թագաւորութիւնը երկնային էր: Ան աշխարհեկած էր մարդ արարածը իր մեղքերէն փրկելու համար, իր փրկագործութեան խորհուրդը պիտի կատարէր խաչ վրայ իր սուրբ արիւնը թափելով, այսինքն՝ իր կեանքը որպէս փրկանք նուիրելով Հօր Աստուծոյ, որպէս Հայր Աստուած մեղքին անէծքը, պատիժը վերցնելու Ադամի սերունդին վրայէն:

Աշակերտները տակաւին չէին կրցած ըմբռնել այդ բոլորը եւ այդ պատճառով շշմեցան, շփոթեցան եւ յոսահատեցան՝ երբ տեսան իրենց վարդապետին չալ չարանքներն ու խաչելութիւնը: Անոնք տարակոյսի մի մնացին լսելով Յիսուսի յարութեան անտիսը. սակայն Յիսուսի երեւումները փարատեցին անոնց կասկածը:

Յիսուս իր երեւումներուն ընթացքին բացաւ իր աշակերտներուն հոգիին աչքերը, որպէսզի հասկնային դարեր առաջ իր մասին գրուած մարգարէութիւնները:

Թովմաս՝ առանց տեսնելու չկրցաւ հաւատալ Յիսուս յարութեան եւ յանդիմանուեցաւ: Յիսուսի կողմէ Թով

մասին ըսուած «Մի ըլլար անհաւատ, այլ՝ հաւատաց-
եալ», խօսքը ուղղուած է բոլորիս, որպէսզի հաւատանք
իրեն, դաւանինք զինք Տէր եւ Փրկիչ՝ արժանանալու
համար երկինքի արքայութեան:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- 1) Եմմատուսի ճամբուն վրայ Յիսուս որո՞նց երեցաւ:
- 2) Կղէովպաս եւ իր ընկերը իրարու հետ ի՞նչ բանի մասին
կը խօսէին:
- 3) Յիսուս ի՞նչ բացատրեց անոնց:
- 4) Կղէովպաս եւ իր ընկերը ե՞րբ ճանչցան Յիսուսը:
- 5) Կղէովպաս եւ իր ընկերը ո՞ր վերադարձան եւ որո՞նց
պատմեցին Յիսուսի երեւումը:
- 6) Աշակերտները յանկարծ Յիսուսը իրենց մէջ տեսնելով
ի՞նչ եղան:
- 7) Յիսուս ի՞նչ ըսաւ իրենց եւ ի՞նչ ուզեց:
- 8) Ո՞ր աշակերտը բացակայ էր Յիսուսի երեցած ատենը:
- 9) Թովմաս ի՞նչ ըսաւ իր ընկերներուն:
- 10) Յաջորդ երեւումին Յիսուս ի՞նչ ըսաւ Թովմասին:
- 11) Թովմաս ի՞նչ ըսաւ Յիսուսին:
- 12) Յիսուս ի՞նչ պատասխանեց:

ԳՈՅ ՍՈՐՎԻԼ

«Երանի՛ անոնց՝ որոնք առանց զիս տեսնելու կը հաւա-
տան» (Յովհ. Ի.29):

ԻԳ. Դաս

Յիսուս Կ'երեւի Տիրերիոյ Ծովուն Եզերքը

(Յովհ. ԻԱ.1-19)

Իր յարութենէն ետք, Յիսուս յաճախ երեցաւ իր աշ-
ակերտներուն: Օր մը դարձեալ յայտնուեցաւ անոն-
ց Տիրերիոյ (Գալիլիոյ) ծովուն եզերքը:

Աշակերտներէն եօթը հոգի, Սիմոն-Պետրոսի գլխա-
րութեամբ՝ ձուկ որսալու գացեր էին, սակայն, ամբ-
գիշերը աշխատելով հանդերձ, չէին կրցած բան
բռնել: Առաւօտեան դէմ Յիսուս ծովեզերքը կեցած ձ-
տուաւ իրենց եւ ըսաւ.

— Տղաք, ուտելու բան մը ունի՞ք:

— Ո՛չ, պատասխանեցին աշակերտները եւ չճանչէ-
ն իրենց խօսակիցը:

— Ուռկանը նաւակին աջ կողմը նետեցէք եւ հոն պլ-
գտնէք, ըսաւ Յիսուս:

Աշակերտները, երբ ուռկանը նաւակին աջ կողմը
տեցին, այնքան առատ ձուկեր բռնեցին, որ ան-
ճանրութենէն դժուարաւ կը քաշէին գայն: Նոյն միջո-
ցով հաննէս նկատեց, որ իրենց հետ խօսողը Յիսու-
ս էր, ու ըսաւ Պետրոսի.

— Անիկա Տէրն է:

Պետրոս երբ իմացաւ, թէ Տէրն էր, անմիջապէս
գոլասը վրան առնելով ջուրը նետուեցաւ, որովհե-
տեւ մերկ էր:

Երբ ցամաք ելան, հոն վառած կրակ տեսան, վր-
ձուկ դրուած եւ քովն ալ՝ հաց: Յիսուս ըսաւ անոն-
ց.

— Ձեր բռնած ձուկերէն հոս բերէք:

Միմոն Պետրոս նաև ելալ եւ ուռկանը ցամաք քաշեց, հարիւր յիսուն երեք մեծամեծ ձուկերով լեցուն: Հակառակ այդչափ շատ ըլլալուն՝ ուռկանը չպատուեցաւ:

— Եկէ՛ք, կերէք, ըսաւ Յիսուս:

Երբ բոլորը եկան, Յիսուս առաւ հացը եւ տուաւ անոնց, նոյնպէս ձուկն ալ:

Ճաշէն վերջ, Յիսուս ըսաւ Միմոն Պետրոսի.

— Միմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս ասոնցմէ աւելի:

— Այո՛, Տէ՛ր, Դուն գիտես, որ քեզ կը սիրեմ, ըսաւ Պետրոս:

— Արածէ՛ իմ գառնուկներս, ըսաւ Յիսուս:

Երկրորդ անգամ Յիսուս նորէն հարցուց.

— Միմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս:

— Այո՛, Տէ՛ր, դուն գիտես, որ կը սիրեմ քեզ, պատասխանեց Պետրոս:

— Արածէ՛ իմ ոչխարներս, ըսաւ Յիսուս:

Երրորդ անգամ Յիսուս դարձեալ հարցուց.

— Միմոն, Յովնանի որդի, կը սիրե՞ս զիս:

Պետրոս տրտմեցաւ, որ Յիսուս երեք անգամ նոյն հարցումը ուղղեց իրեն, եւ պատասխանեց.

— Տէ՛ր, դուն ամէն ինչ գիտես, եւ գիտես թէ կը սիրեմ քեզ:

— Արածէ՛ ոչխարներս, ըսաւ Յիսուս եւ աւելցուց, ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ քեզի, երբ երիտասարդ էիր, քու ձեռքովդ կը կապէիր գօտիդ եւ կ'երթայիր՝ ո՛ւր որ ուզէիր: Սակայն երբ ծերանաս, ձեռքերդ վեր պիտի վերցնես եւ ուրիշներ պիտի կապեն քու գօտիդ եւ քեզ պիտի տանին հոն՝ ուր չես ուզեր երթալ:

Յիսուս՝ այս խօսքերը ըսաւ Պետրոսին, ցոյց տալու համար, թէ ան ինչպիսի մահով պիտի փառաւորէր զԱստուած: Այս բոլորէն ետք, Յիսուս ըսաւ Պետրոսի.

— Ետեւէս եկուր:

Յիսուս, իր յարութենէն մինչեւ իր համբարձում յաճախ երեւցաւ իր աշակերտներուն եւ անոնց պատու ընց, որ երթան աշխարհի ամէն կողմերը ու քարոզ եւ հաւատացողները մկրտեն Հօր, Որդւոյն եւ Սուրբ Հգիին անունով:

Իր յարութենէն քառասուն օր ետք, Յիսուս իր աշակերտները տարաւ Զիթենեաց լեռը: Հոն, իր ձեռքէ բարձրացնելով օրհնեց զանոնք: Ու մինչ կ'օրհնէ յանկարծ սկսաւ վեր համբառնալ: Աշակերտները ապշ դիտեցին Յիսուսի վեր բարձրանալը, մինչեւ որ ամը եկաւ եւ զԱյն իրենց աչքերէն առաւ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Պետրոսի նման, մենք ալ պէտք է սրտանց ըսեն «Տէր, կը սիրեմ քեզ»: Մեր ամենուն պարտականութիւն է, բոլոր սրտով սիրել զԱստուած ու անոր պատու ընկնելը կատարելով՝ վարել օրինակելի կեանք:

Յիսուս որք չթողուց իր աշակերտները: Ան երեւց անոնց, ուղղութիւն տուաւ, սորվեցուց եւ բացատրե թէ ինչ պէտք էր ընէին իր Աւետարանը փարոզելու համար: Աշակերտները հնազանդեցան ու կատարեց իրենց Տիրոջ հրամանը եւ բոլոր ազգերուն փարոզեց խաչին վրայ Յիսուս Բրիստոսի կատարած փրկագործութեան խորհուրդը:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1) Յիսուսի աշակերտները ձուկ որսալու համար ո գացեր էին:

2) Մինչեւ առաւօտ կրցե՞ր էին բան մը որսալ:

3) Առաւօտուն ծովեզերքին վրայ ո՞վ երեւցաւ իրենց:

- 4) Աշակերտները կրցա՞ն ճանչնալ Յիսուսը:
- 5) Յիսուս ի՞նչ հարցուց անոնց:
- 6) Յիսուս ի՞նչ առաջարկեց անոնց որ ընեն:
- 7) Երբ ուովանը նստակին աջ կողմը նետեցին, ի՞նչ պատահեցաւ:
- 8) Առաջին անգամ ո՞վ ճանչցաւ Յիսուսը:
- 9) Աշակերտները ծովեզերք հասնելով ի՞նչ տեսան:
- 10) Ծաշէն վերջ Յիսուս ի՞նչ հարցուց Պետրոսի:
- 11) Պետրոս ի՞նչ պատասխանեց Յիսուսի:
- 12) Յիսուս քանի՞ անգամ կրկնեց նոյն հարցումը:
- 13) Յիսուս ի՞նչ պատուիրեց Պետրոսին:

ԳՈՑ ՍՈՐՎԻԼ

«Բու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր հոգովդ ու բոլոր զօրութեամբդ սիրես» (Բ. Օրին. 2.5):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք

Յառաջարան

- Ա.— Յովհաննէս Մկրտիչի Ծնունդը
- Բ.— Յովհաննէս Մկրտիչ
եւ Յիսուսի Մկրտութիւնը
- Գ.— Յիսուս կը փորձուի Սատանայէն
- Դ.— Տասներկու Աշակերտներուն Ընտրութիւնը
- Ե.— Նիկողեմոս Յիսուսի մօտ
- Զ.— Յիսուսի Հրաշքները
Կափառնայումի Անդամալոյծին բժշկութիւնը
Հարիւրապետի ծառային բժշկութիւնը
- Է.— Ի Ծնէ Կոյրին Բժշկութիւնը
- Ը.— Սերմնացանին Առակը
- Թ.— Որումներուն Առակը
- Ժ.— Յովհաննէս Մկրտիչին Մահը
- ԺԱ.— Յիսուսի Այլակերպութիւնը
- ԺԲ.— Փարիսեցիին ու Մաֆսաւորին Առակը
- ԺԳ.— Ղազարոսին Յարութիւնը

ԺԴ.— Յիսուսի Յաղթական Մուտքը Երուսաղէմ	59
ԺԵ.— Տաճարի Կործանումին Գուշակութիւնը Եւ Քրիստոսի Երկրորդ Գալուստը	63
ԺԶ.— Տասը Կոյսերուն Առակը	69
ԺԷ.— Յիսուսի Վերջին Ընթրիքը Եւ Մատնութիւնը	73
ԺԸ.— Յիսուսի Ձերբակալութիւնը	79
ԺԹ.— Յիսուսի Դատաւարութիւնը հրեաներու Ատեանին Առջեւ Եւ Պետրոսի Ուրացութիւնը	83
Ի.— Յիսուսի Չարչարանքները, Խաչելութիւնն ու Թաղումը	88
ԻԱ.— Յիսուսի Յարութիւնը	95
ԻԲ.— Յիսուսի Երեւումը Աշակերտներուն	100
ԻԳ.— Յիսուս Կ'երեւի Տիրեբիոյ Մովսէս Եգեբքը	105